Ազգ
Azg
armenian daily
4 ՄԱՅԻՍ 1995, ՀԻՆԳՇԱԲԹԻ # 82 (836)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Փոխվարչապետ Չիտչյանը Մոսկվայում քննարկել է ռուսական գազի մատակարարման հարցը

Մայիսի 3-ին ՀՀ փոխվարչապետ Վիգեն Չիտչյանը, որը մեկօրյա աշխատանքային այցով գտնվում էր Մոսկվայում, հանդիպում ունեցավ Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության ղեկավարության հետ: Քննության առնվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք խնդիրներ, այդ թվում Հայաստանին ռուսաստանյան գազի մատակարարման հարցը: Նույն օրը Վիգեն Չիտչյանը ՌԴ ատոմային էներգետիկայի նախարարությունում մասնակցեց հայկական ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի վերականգնմանը նվիրված հերթական կազմակերպչական խորհրդակցությանը: Ամփոփվեցին ատոմակայանում կատարված վերանորոգման, վերականգնման աշխատանքների արդյունքները, քննարկվեցին ատոմակայանի գործարկման եւ կարգաբերման աշխատանքների եւ ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացման լրացուցիչ միջոցառումներին առնչվող հարցեր: Կողմերը պայմանավորվեցին հերթական կազմակերպչական խորհրդակցությունն անցկացնելու մայիսի կեսերին, Երեւանում: ՀՀ ԿԾ

ՕՐՎԱ ԽՆԴԻՐ

Զորակցություն «Գոլոս Արմենիի» թերթին

ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, վարչության անդամ, ՀՀ ԳԽ պատգամավոր եւ «Պայքար» ամսագրի գլխավոր խմբագիր Հարություն Կարապետյանը, ինչպես նաեւ «Ազգ» օրաթերթի պատասխանատու խմբագիր Հակոբ Ավետիքյանը մայիսի 3-ին, Ազատ մամուլի միջազգային օրը, այցելեցին «Գոլոս Արմենիի» թերթի խմբագրություն, որտեղ հանդիպում ունեցան թերթի գլխավոր խմբագիր Ֆլորա Նախշքարյանի, նրա տեղակալներ Շամիրամ Աղաբեկյանի եւ Նարեկ Մեսրոպյանի հետ:

Հյուրերը, առաջնորդվելով խոսքի ու մամուլի ազատության մասին կուսակցության սկզբունքներով, իրենց զորակցությունը հայտնեցին «Գոլոս Արմենիի» թերթին, մամուլի դեմ արձանագրվող ոտնձգությունները համարելով Հայաստանում ժողովրդավարության զարգացման դեմ ուղղված լուրջ սպառնալիք:

«Գոլոս Արմենիին» դիմում է դատական արբիտրաժին

Ռուսալեզու ընդդիմադիր «Գոլոս Արմենիի» թերթի գլխավոր խմբագիր Ֆլորա Նախշքարյանը Նոյյան Տապան գործակալության բրիֆինգին հայտնել է, որ մայիսի 3-ի ժամը 13-ի դրությամբ «Պարբերական» պետական հրատարակչության տնօրեն Վրեժ Մարկոսյանը շարունակում էր պնդել, որ տպարանը չի տպագրի թերթի հերթական համարը, քանի դեռ «Գոլոս Արմենիին» չի ազատել զբաղեցրած այն սենյակները, որոնք նախատեսված են եղել Հայաստանի խորհրդարանի «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի համար: Միաժամանակ հայտնի է դարձել, որ թերթի խմբագրությունը իր շահերը պաշտպանելու նպատակով դիմել է պետական արբիտրաժին: Թերթի աշխատակիցների պնդմամբ, խմբագրությունը իր զբաղեցրած տարածքում մինչեւ 1995 թ. հուլիսի 1-ը մնալու լիակատար իրավունք ունի: Բացի դրանից, օրենքի համաձայն, քանի դեռ գործը քննվում է արբիտրաժում, թերթի նկատմամբ բոլոր պատժամիջոցները պետք է դադարեցվեն: ԼՏ

Հայ-վրացական սահմանների վերահսկման համատեղ միջոցառումներ

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Հայաստանի եւ Վրաստանի սահմանապահ զորքերի հրամանատարները մայիսի վերջերին կանցկացնեն սահմանային տարածքների վերահսկման մի շարք համատեղ միջոցառումներ: Ինչպես Սնարքին հայտնեց Հայաստանի սահմանապահ զորքերի հրամանատար գեներալ-մայոր Լեւոն Ստեփանյանը, առաջիկա ծրագրի նպատակն է հարթել եւ հետագայում կասեցնել միջադեպերը հանրապետությունների սահմանամերձ գոտում: Խոսքը մասնավորապես Վրաստանի Մառնեուլի շրջանի մասին է: Մենք չենք կարող թույլ տալ այդ գոտում ռազմական փոքր միջադեպերի ծավալում, հայտարարեց Լեւոն Ստեփանյանը: Այդ նպատակով մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է սահմանամերձ տարածքների համատեղ վերահսկումը, հանդիպումները շրջանների ղեկավարության եւ բնակչության հետ:

ԵՐԵՎԱՆ

Դաշնակցությունը չի մասնակցի համամասնական ընտրություններին

Երեկ, մայիսի 3-ին, Հայ հեղափոխական դաշնակցության բյուրոն հանդես է եկել հայտարարությամբ, որում մասնավորապես նշվում է, թե 1994 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՅԴ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ նախագահի ապօրինական եւ կամայական հրամանագրով խախտվեց այն սահմանագիծը, որով բաժանվում էր ժողովրդավարական ճանապարհով զարգանալու հնարավորություն ունեցող հասարակարգը բռնապետականից: Միաժամանակ նշվում է, թե դաշնակցությունը բազմիցս ահազանգել է ծանր ու անդառնալի հետեւանքների մասին՝ մշտապես պահելով զգաստ կեցվածք, բայց չտալով, որ հակադարձության ալիքը վտանգի հանրապետության ներքին կյանքի կայունությանը հատկապես արցախյան պատերազմի ողջ ժամանակահատվածում, հույս փայփայելով, որ ընդդիմադիր ուժերին կհաջողվի կասեցնել բռնապետական միտումների զարգացումը, ինչը, ցավոք, չիրականացավ:

Հայտարարության մեջ նշված է նաեւ, թե ապօրինական միջոցներով փակվել են ոչ միայն ՀՅԴ պաշտոնաթերթերն ու լրատվական կենտրոնը, այլեւ անկախ մամուլի մի շարք օրգաններ: Ապօրինական գործողությունները շարունակվում են ընդդիմադիր մեկ-երկու լրագրերի նկատմամբ, վերջ չունեն ՀՅԴ անդամների եւ նրանց համակիրների կամայական ձերբակալությունները, դատապաշտպանների հետապնդումն ու դաժան հաշվեհարդարը, բանտերում անհրաժեշտ ցուցմունքներ տալուց հրաժարվող կալանավորների խոշտանգումը:

Այնուհետեւ նշվում է, թե ընդունված «Ընտրությունների մասին» օրենքը հակասում է ընդդիմադիր կուսակցությունների մոտեցումներին եւ Սահմանադրական հանձնաժողովի կողմից ներկայացված Սահմանադրության նախագծի դրույթներին: ՀՀ վարչախմբի կողմից աշխատանք է տարվել, որպեսզի անվերահսկելի դարձվի ղեկավար շրջանակի գործունեությունը եւ նրա ձեռքում կենտրոնացվի ողջ իշխանությունը:

«Նույնիսկ այս պայմաններում Դաշնակցությունը նպատակահարմար գտավ եւս մեկ փորձ կատարել Հայաստանի քաղաքական կյանքը ժողովրդավարական հուն վերադարձնելու ուղղությամբ, ապրիլի 13-ին ՀՅԴ ներկայացուցիչները ընտրություններին մասնակցելու հայտով դիմեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովին եւ մերժվեցին: Հայտը նույնիսկ չքննարկվեց», գրված է հայտարարության մեջ: Ուստի, ելնելով ստեղծված իրավիճակից, «զրկված լինելով հուլիսի 5-ին նախատեսված Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու օրինական իրավունքից, ՀՅԴ բյուրոն հայտարարում է, որ Դաշնակցությունը որեւէ այլ կուսակցության կամ միավորման կողմից համամասնական ընտրությունների համար ներկայացվող ցուցակների մաս չի կազմելու»: Հայտարարության մեջ ընդգծվում է, թե իրենց «Հայաստանի հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՀՀԴԿ) եւ «Հայ դաշնակցություն» անվանող եւ համամասնական ընտրություններում մասնակցելու հայտ ներկայացրած խմբավորումները գաղափարական կամ կազմակերպական որեւէ առնչություն չունեն ՀՅԴ-ի հետ: Միաժամանակ, ՀՅԴ բյուրոն եւ ողջ կազմակերպությունը շնորհակալություն են հայտնում բոլոր այն կազմակերպություններին ու միավորումներին, որոնք առաջարկել են ՀՅԴ անդամներին տեղ գրավել իրենց ցանկերում: Շնորհակալական խոսք է ուղղված հատկապես «Սահմանադրական իրավունք միավորում», «Արցախ-Հայաստան», «Ազատամարտիկների միություն» եւ «Ժառանգ» հասարակական-քաղաքական կազմակերպություններին, որոնք պատրաստ էին ՀՅԴ-ի անդամներին իրենց համատեղ ցուցակի առաջին տեղերը տրամադրել: ՀՅԴ բյուրոն համոզմունք է հայտնել, թե ստեղծված պայմաններում, երբ կողոպտված են կուսակցության օրինական իրավունքները եւ անհնարին է դարձել ժողովրդավարական ընտրությունների անցկացումը, ՀՅԴ մասնակցությունն այս ձեւական միջոցառմանն անընդունելի է եւ անիմաստ»:

ԱՊՀ

Միջխորհրդարանական պատվիրակությունը Երեւանում

Մայիսի 3-ին ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանն ընդունեց աշխատանքային այցով Հայաստան ժամանած ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խաղաղարար առաքելությամբ տարածաշրջան այցելած պատվիրակությանը, որը ղեկավարում է ՌԴ Դաշնության խորհրդի ԱՊՀ գործերով կոմիտեի նախագահ Վադիմ Գուստովը: Պատվիրակության կազմում է նաեւ ՌԴ արտգործնախարարության Լեռնային Ղարաբաղում խաղաղարար կարգավորման միջնորդական առաքելության ղեկավար Վլադիմիր Կազիմիրովը: Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման տարելիցի կապակցությամբ պատվիրակության շրջան կատարած աշխատանքային այցի ընթացքում սպասվում են մի շարք հանդիպումներ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ղեկավարների, ինչպես նաեւ Կարմիր խաչի ներկայացուցիչների հետ: Ինչպես հաղորդեցին ՀՀ ԳԽ մամուլի կենտրոնից, հանդիպման ընթացքում պատվիրակության անդամները նշեցին, թե առաքելությունը նպատակ ունի խթանելու այս հարցում միջնորդական ձեռնարկումները եւ օժանդակելու կողմերի մոտ պահվող գերիների փոխանակությանը: Ողջունելով հյուրերին Բաբկեն Արարքցյանը բարձր գնահատեց ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի ջանքերը, նշելով հատկապես բիշքեկյան արձանագրության ստորագրման կարեւորությունն այդ հարցում: ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի գլխավոր քարտուղար Միխայիլ Կրոտովը Բաբկեն Արարքցյանին հանձնեց վեհաժողովի խորհրդի նախագահ, ՌԴ Դաշնության խորհրդի նախագահ Վլադիմիր Շումեյկոյի ուղերձը Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման տարելիցի առթիվ: Շնորհակալությամբ ընդունելով այն, ՀՀ խորհրդարանի նախագահը մեկ անգամ եւս հավաստեց Հայաստանի իշխանությունների հաստատակամությունը շարունակելու հիմնախնդրի խաղաղ լուծման քաղաքականությունը:

Պատվիրակության անդամները ծաղիկներ դրեցին Եղեռնի հուշահամալիրին

Մամուլը պետք է քննադատի իշխանություններին

Ռուս լրագրողները քննարկում են իրենց հարցերը

Ելույթ ունենալով Ռուսաստանի լրագրողների միության 4-րդ համագումարում Ելցինի անձնակազմի պետ Սերգեյ Ֆիլատովը գովաբանեց Ռուսաստանում ազատ մամուլի զարգացումը, հաղորդում է Ինտերֆաքսը: Նրա ասելով, 1994 թ. վերջին երկրում գրանցված զանգվածային լրատվության միջոցների թիվը հասել է 5177-ի, այդ թվում 2364 թերթ, 2219 հանդես, 304 հեռուստածրագիր, 186 ռադիոծրագիր եւ 104 լրատվական գործակալություն: Ֆիլատովը նաեւ ասաց, թե իշխանությունները հույս ունեն, որ զանգվածային լրատվության միջոցները «հասկացողության ոգի եւ մասնակցություն կունենան ժողովրդավարական Ռուսաստանը կառուցելու գործում»:

Փոխվարչապետ Սերգեյ Շախրայն առաջարկեց, որ կառավարությունն ու լրագրողները պետք է համաձայնության գան «փոխադարձ պատասխանատվության մասին»: Համենայն դեպս, Տնտեսական ազատության կուսակցության ղեկավար Կոնստանտին Բորովոյն ասաց, որ հասարակությանը «թունելի վերջում լույսի շող» ցույց տալը կառավարության գործն է եւ ոչ լրագրողների: Նա ասաց, թե մամուլը քննադատող պետք է լինի իշխանությունների նկատմամբ: Մյուս կողմից, պետական Մայակ ռադիոկայանի տնօրեն Վլադիմիր Պոպովը Ինտերֆաքսին ասել է, թե ընկերությունն ընդամենը մինչեւ մայիսի 7-ը կարող է ֆինանսավորել իր ծախսերը:

Եվրոպան մերժեց առեւտրի արգելքը Իրանի նկատմամբ

Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան եւ Եվրամիության երկրները հրաժարվել են միանալու ԱՄՆ-ին եւ առեւտրի արգելք հայտարարելու Իրանի նկատմամբ: Արեւմտյան աղբյուրների համաձայն, ԱՄՆ-ն իր դաշնակիցներից աջակցություն էր ակնկալում Իրանի հետ առեւտրական հարաբերությունները դադարեցնելու հարցում: Պետդեպարտամենտի ներկայացուցչի ասելով, ԱՄՆ-ն Եվրոպայի սկզբնական արձագանքից չի զարմացել, քանի որ խոսքը եվրոպական մի շարք երկրների եւ Ճապոնիայի Իրանի հետ իրականացվող շոշափելի առեւտրական շրջանառության մասին է: Նա նաեւ ասաց, որ ԱՄՆ-ն իր դաշնակիցներին փորձել է համոզել, որ Իրանը իր միջուկային ծրագրով վտանգ է ներկայացնում եւ մատնանշեց, որ Մերձավոր Արեւելքի երկրներն ու Ճապոնիան այդ հարցում պաշտպանեցին ԱՄՆ-ին, իսկ Ռուսաստանը պատրաստակամություն հայտնեց վերանայելու Իրանին սարքավորման հնարավոր վաճառքը, որը կարող է օգտագործվել միջուկային զենք ստեղծելու համար: ԼՏ

ՏԱՐԱԾՔ

Զագրեբը սերբական կրակի տակ

ՍԱՐԱՅԵՎՈ, 3 ՄԱՅԻՍ, WSJ: Սերբական բանակը կատաղորեն փոխադարձեց խորվաթական զորքի նախորդ օրվա հարձակումներին եւ կրակի տակ առավ մայրաքաղաք Զագրեբը: Սերբերի հրթիռները պայթեցին քաղաքի կենտրոնում, սպանելով առնվազն 6 եւ վիրավորելով 121 հոգու: Խորվաթական բանակի առաջխաղացից խույս տալու համար Խորվաթիայում ապրող հազարավոր սերբեր փախուստ էին տվել դեպի Բոսնիա: Կռիվն ամենասաստիկն էր 1991 թվից ի վեր Խորվաթիայում: Երկօրյա կռիվների ընթացքում պատանդ են վերցվել ՄԱԿ-ի շուրջ 200 խաղաղապահ զինվորներ:

Չեչենները խփում են ու փախուստ տալիս

ԳՐՈԶՆԻ, 3 ՄԱՅԻՍ, WSJ: Չեչեն մարտիկները առայժմ հաջողությամբ են կիրառում «խփել փախուստ տալ» մարտավարությունը ռուսաստանյան զորքի դեմ: Վերջիններս նույնիսկ մայրաքաղաք Գրոզնիում ստիպված եղան ծանր զենք օգտագործել նրանց դեմ, հակառակ որ նախագահ Ելցինը միակողմանի հրադադար էր հայտարարել մայիսի 9-ին Մոսկվայում կայանալիք միջոցառումներին բազմաթիվ երկրների պետերի ժամանման առթիվ:

ԱԶԳ

տեղական

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Շարունակվում է Սահմանադրության նախագծի քննարկումը

Մայիսի 3 ին ՀՀ Գերագույն խորհուրդը շարունակեց Սահմանադրության նախագծի քննարկումը: Ընդդիմախոսների հիմնական առարկությունները վերաբերում են ՀՀ նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերություններին, տարածքային կառավարմանը եւ տեղական ինքնակառավարմանը վերաբերող դրույթներին: Հիմնական շեշտադրումն արվում է վերջինիս անկատարության վրա:

«Տարածքային կառավարում եւ տեղական ինքնակառավարում» գլխում մասնավորապես ասված է. «ՀՀ վարչատարածքային միավորումներ են մարզերը եւ համայնքները: Մարզերը կազմված են գյուղական եւ քաղաքային համայնքներից: Համայնքներում իրականացվում է տեղական ինքնակառավարում: Համայնքի ղեկավարը՝ քաղաքապետը կամ գյուղապետը ձեւավորում է իր աշխատակազմը: Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում նրա կատարումը, օրենքով սահմանված կարգով սահմանում տեղական տուրքեր եւ վճարումներ: Մարզերում իրականացվում է պետական կառավարում: Կառավարությունը մարզերում նշանակում եւ ազատում է մարզպետներ, որոնք իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մարզպետի ներկայացմամբ կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին:

Երեւան քաղաքը ունի մարզի կարգավիճակ: Երեւանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում եւ ազատում է Հանրապետության նախագահը: Տեղական ինքնակառավարումը Երեւանում իրականացվում է թաղային համայնքներում»:

Այսպիսով, Երեւանի կարգավիճակը, որում բնակվում է Հայաստանի բնակչության մեկ երրորդը, ուր գտնվում է գիտական, արտադրական հիմնարկների գերակշռող մասը, հավասարեցված է մարզի կարգավիճակի: ՆՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Միջազգային դիտորդները գոհ են ԼՂՀ ընտրություններից

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացված խորհրդարանական ընտրությունները անցել են առանց լուրջ խախտումների», այսպես երեկ հայտարարեց Ռուսաստանի Դաշնության Պետդումայի պատգամավոր Վալենտին Միխայլովը, նշելով, թե անկախ միջազգային դիտորդների խմբի խումբը եղել է 6 ընտրատարածքում եւ ծանոթացել՝ «թե ընտրությունների ընթացքին, թե քվեների հաշվարկմանը եւ թե ընտրությունների մասին ԼՂՀ օրենքին: Միխայլովն այն կարծիքը հայտնեց, թե կազմակերպումից ավելի լավ հնարավոր չէր անել: Անդրադառնալով թերություններին, նա մատնանշեց, թե որոշ տեղամասային ընտրատարածքներում լավ չեն ծանոթացել ընտրությունների մասին օրենքին, կամ էլ, օրինակ, գրիչի փոխարեն միամտաբար օգտագործել են մատիտ: Դա բացատրվեց նաեւ այն հանգամանքով, որ մինչ այդ նման մակարդակով ընտրությունների անցկացման փորձ չի եղել: Վալենտին Միխայլովը նաեւ նշեց, թե ԼՂՀ ընտրությունների մասին օրենքը կարիք ունի որոշ մշակումների: Պատասխանելով այն հարցին, թե որքանով է մոտեցել ԼՂՀ անկախության ճանաչման պահը, Պետդումայի պատգամավոր Անդրեյ Նույկինն ասաց, թե այդ խնդիրը առնչվում է սահմանների անձեռնմխելիության եւ ինքնորոշման միջազգային սկզբունքների հետ: Այդ առումով նա ճիշտ համարեց այդ երկու սկզբունքների միավորման մեխանիզմի ստեղծումը:

Բայց Անդրեյ Նույկինի ասելով տարածքային ամբողջականության սկզբունքը կարող է գործել մինչեւ այն պահը, քանի դեռ այդ տարածքում խտրականություն չի արձանագրվել որեւէ ազգի նկատմամբ:

Ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոնի ներկայացուցիչ Անահիտ Բեստալաշվիլին, որը նույնպես որպես անկախ դիտորդ մասնակցել էր ԼՂՀ խորհրդարանական ընտրություններին, ավելի շատ խոսեց լրատվական շրջափակման եւ իրենց կենտրոնի կատարած աշխատանքների մասին: Կենտրոնի նախագահ Արկադի Վարդանյանի ջանքերի շնորհիվ, Մոսկվայում հրատարակվում է «Արմյանսկի վեստնիկ» թերթը, կազմակերպվում են տարբեր միջոցառումներ: Իսկ Գալինա Պետրովա-Նույկինան, որը ներկայացնում էր ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեն, պատմեց 1988 ից մինչեւ այսօր տարված աշխատանքների մասին, շեշտելով, որ այժմ Մոսկվայում հայերի նկատմամբ ավելի բարենպաստ մթնոլորտ է ստեղծվել, քան նախկինում: Անդրեյ Նույկինն անդրադառնալով «Գոլոս Արմենիի» թերթում տպագրված Հմայակ Հովհաննիսյանի հարցազրույցին, նշեց, թե նրանում բերված փաստերը աղավաղված են: Պետդումայի պատգամավորը իրավացիորեն նշեց, որ ոչ մեկն, այդ թվում Հովհաննիսյանը, իրավունք չունի ՌԴ Պետդումայի ղեկավարության որոշումը իր աշխատանքի արդյունքը համարել, դրանով վարկաբեկելով եւ Պետդումային, եւ ընդունված հայտարարությունը: Ընդունելով ճիշտ գնահատականը, մի անգամ եւս նշենք, որ «Ազգը» իր գնահատականը տվեց նման բնույթի ինքնակոչ հայտարարություններին, նախանշելով դրանց վտանգավորությունը:

ՏԱՐՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՆԴԻՐ

Հայաստանում անկախ մամուլ գոյություն ունի

«Չնայած Հայաստանում անկախ ու ազատ մամուլի կայացումը ժամանակի հարց է եւ կախված է քաղաքական կուլտուրայի ձեւավորումից, բայց ցանկալի կլիներ, որ ազգային խնդիրները լուծելիս մեր մամուլը վերանար նեղ անձնական շահերից, լիներ անկախ թե՛ կուսակցականությունից, թե՛ իշխանություններից», Նոյյան տապան գործակալության թղթակցին տված հարցազրույցի ժամանակ ասաց Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը:

Վերջինս գտնում է, որ հանձին իշխանություններից անկախ գործող կուսակցական մամուլի, որի մեջ մտնում են նաեւ ընդդիմադիր կուսակցությունների պաշտոնաթերթերը, Հայաստանում անկախ մամուլ գոյություն ունի:

Միաժամանակ, ՀՀԿ խորհրդի նախագահը ցանկություն է հայտնել, որ ընդլայնվեն ազատ մամուլի հնարավորությունները եւ կասեցվեն վերջին շրջանում արձանագրված սահմանափակումներն ու ճնշումները (լրագրողների եւ խմբագրությունների նկատմամբ ահաբեկչությունները):

ՆՏ

Հայաստանը՝ Եվրոպայի տեքստիլային ցանցի անդամ

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Եվրախորհրդարանի հովանու ներքո գործող Եվրոպայի տեքստիլային ցանցը հետաքրքրվում է Հայաստանով: Սնարքի թղթակցի հետ զրույցի ընթացքում ժողովրդական ստեղծագործության պետական թանգարանի տնօրեն Մարտին Միքայելյանը հայտնեց, որ օրերս հանրապետությունը դարձավ Եվրոպայի բոլոր պետությունների, Ասիայի, Աֆրիկայի եւ Ամերիկայի մի շարք երկրներ ընդգրկող կազմակերպության անդամ: Հայաստանը մտավ «Մշակութային ժառանգություն» խմբի մեջ, որն զբաղվում է տեքստիլային արտադրության արվեստի գիտական մշակումներով եւ քարոզչությամբ:

Մայիսի 30 ից հունիսի 3 ը Սանկտ Պետերբուրգում տեղի է ունենալու «Մշակութային ժառանգություն» խմբի գիտաժողովը: Եվրոպայի տեքստիլային ցանցի շտաբ կայանը տեղակայված է Հանովերում (Գերմանիա):

ՀԱՄԱՌՈՏ

Մայիսի 8-ը նշվում է որպես Կարմիր խաչի միջազգային օր

Մայիսի 8 ին, Կարմիր խաչի միջազգային օրը, ժամը 14.30 ին կամերային թատրոնում կկայանա Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ), Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի դաշնության, Հայկական կարմիր խաչի եւ ընթացիկ տարում իրականացվելիք նոր նախագծերի գործունեության մասին պատմող ցուցահանդեսի բացումը: Տեղի կունենա նաեւ «Բացեք ձեր աչքերը» երգի շնորհանդեսը: Հայաստանում ԿԽՄԿ ի պատվիրակությունից Նոյյան տապան գործակալության թղթակցին հաղորդել են, որ այցելուները կծանոթանան Ռ. Մավիսակալյանի «Ձորում» հեռուստահաղորդմանը, որը կկայանա կամերային թատրոնում ժամը 15.00 ին: Մուտքն ազատ է: ՆՏ

Թուրքական մամուլի ոգեւորությունը չի նվազում

Թուրքական «Միլլիյեթ», «Ենի Յուզըլ» եւ «Սաբահ» թերթերը գրում են, որ ապրիլի 24 ի առթիվ ԱՄՆ ի նախագահ Բիլ Քլինթոնը իր հայտարարության մեջ ասել է, որ դեսպանի մակարդակով ներկայացուցիչ պետք է նշանակի Լեռնային Ղարաբաղում: Թերթերը, միաժամանակ, շարունակում են արտահայտել իրենց բուռն ուրախությունն այն առթիվ, որ Քլինթոնի հայտարարության մեջ չի օգտագործվել «ցեղասպանություն» բառը. «թուրքական դիվանագիտության հաղթանակ», «Հայկական լոբբիի երկու տարվա աշխատանքը ջուրն ընկավ» եւ նման խորագրերը չեն իջնում մամուլի էջերից: ՆՏ

ՀԱՄԱՌՈՏ

Ազգային առաջադիմություն եւ ԱԻՄ-Ք-Կենտրոնական հանձնաժողով դատը հետաձգվեց մայիսի 6-ին

Նոյյան տապան գործակալությունն արդեն հաղորդել էր, որ մայիսի 3 ին Երեւանի Արաբկիրի շրջանի ժողովրդական դատարանում տեղի էր ունենալու Ազգային առաջադիմություն եւ Ազգային ինքնորոշում միավորում [illegible] հասարակական քաղաքական կազմակերպությունների եւ ՀՀ Ազգային ժողովի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի միջեւ դատական նիստ (դատարան ներկայացված փաստաթղթում ԱԱ եւ ԱԻՄ-Ք կուսակցությունները հիշյալ հանձնաժողովին ամբաստանում են հակաօրինական որոշումներ կայացնելու մեջ): Ազգային առաջադիմություն կուսակցության վարչությունից հաղորդում են, որ դատական քննությունը հետաձգվել է եւ կկայանա մայիսի 6 ին: ՆՏ

Եթե ջեռուցման վարձերը չմուծվեն, կդադարեցվի էլեկտրամատակարարումը

Ջեռուցման վարձերի չվճարումը ստեղծել է ծանր ֆինանսական վիճակ, որը պատճառ կհանդիսանա էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցման: Այս մասին նշվել է Երքաղխորհրդի մայիսի 2 ի խորհրդակցության ժամանակ: Նշվել է նաեւ, որ վարձերի գանձման աշխատանքները լավ են կազմակերպված Արաբկիրի շրջանում (60 տոկոս): Մյուս շրջաններում վճարումների վիճակը խիստ անբավարար է՝ Շենգավիթ (2 տոկոս), Շահումյան (8,9 տոկոս), Էրեբունի (30 տոկոս), Խորհրդային (20 տոկոս), Մաշտոց (22 տոկոս): Ինչպես «Նոյյան տապան» գործակալության թղթակցին տեղեկացրել են քաղխորհրդի լրատվական կենտրոնից, այն լուրերը, թե իբր ջեռուցման վարձերը պետք է մուծեն ինչ որ կազմակերպություններ, չի համապատասխանում իրականությանը: Բնակչությունն ինքը պետք է վճարի վարձերը մինչեւ հուլիսի 1 ը: ՆՏ

Սպառողական շուկայում գներն աճել են

[illegible] անդորրից հետո սպառողական շուկայում որոշ աշխուժություն նկատվեց: Զատկի շաբաթվա ավարտը նշանավորվեց ձվի գնի բարձրացմամբ, 10 հատ ձվի արժեքը 500 դրամ: Նախորդ շաբաթվա 400 ի փոխարեն (25 տոկոսով): Նկատելիորեն աճել են [illegible] գները (1 կգ-ն 240 ից դարձել է 270 դրամ կամ բարձրացել 12,5 տոկոսով): Վաղահաս կարտոֆիլի [illegible] գրեթե 1/3-ով բարձրացել է հին կարտոֆիլի գինը (1 կգ-ն 120 ից [illegible] 160 դրամ): Մյուս ապրանքների [illegible] գները էական փոփոխություններ չեն կրել: Ընդհանուր առմամբ, սննդամթերքի հիմնական տեսակների գների ինդեքսը [illegible] տատանվում է 1,03 ից 1,05 ի սահմաններում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Պատվաստումների նոր փուլ պոլիոմիելիտի դեմ

Մամլո ասուլիս առողջապահության նախարարությունում

Մայիսի 8-12 ը ՀՀ առողջապահության նախարարությունը կանցկացնի պոլիոմիելիտի պատվաստումների երկրորդ փուլը: Այն իրականացվում է ՄԱԿ ի մանկական կազմակերպության (ՅՈՒՆԻՍԵՖ) եւ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ՀԱԿ) «Միգաքար» ծրագրի շրջանակներում, որն ընդգրկում է Միջին Ասիան, Կովկասը եւ միջերկրածովյան տարածաշրջանը: Երկնակի պատվաստումը կապահովի համեմատաբար բարձր դիմադրողականություն պոլիոմիելիտի 3 ձեւերի դեմ: Ծրագրի ֆինանսավորման եւ վակցինայի ձեռքբերման խնդրում մեծ է եղել ՄԱԿ ի հիմնադրամի, Համաշխարհային եւ Ռոտար ինթերնեշնլ բանկերի օգնությունը: Մոտ մեկ միլիոն չափաբաժին պատվաստանյութ է բերվել Հայաստան: Դիմադրողականության բացակայության դեպքում պոլիոմիելիտով հիվանդանում են 100 ից 95 ը, բայց միայն 5 տոկոսի մոտ է հնարավոր կաթվածահարություն: Հինգ տարեկանից բարձր երեխաների եւ մեծահասակների մոտ այսպես կոչված բնական իմունիտետ է ձեռք բերված եւ հիվանդանալու դեպքերը հազվադեպ են:

Հայաստանում պատվաստումների ծրագրում ընդգրկված են մինչեւ 5 տարեկան 356 հազար 493 երեխա, որոնցից առաջին փուլի ընթացքում պատվաստանյութ ստացան 326 հազար 828 ը (91,06 տոկոս): Հանրապետությունից բացակայության պատճառով չեն պատվաստվել 34 հազար 493 երեխաներ: Երկրորդ փուլի խնդիրն է ավելի լայն ընդգրկում ապահովել: Պատվաստման արդյունքները բնորոշվում են հիվանդության բացակայությամբ եւ դիմադրողականության մակարդակով: Վերջինիս ցուցանիշները ճշտելը չափազանց բարդ է, այսօր գնահատման չափանիշը կարող է լինել միայն հիվանդության բացակայությունը: Առողջապահության նախարարության խնդիրը կլինի հետեւել, որպեսզի հետագայում բռնկումներ չառաջանան եւ գործել տնային կամ տարածաշրջանի շուրջ [illegible] [illegible]ությամբ:

Եվրոպական համագործակցության կողմից ծրագրի իրականացմանը հետեւող հսկիչները, առողջապահության նախարարության ներկայացուցիչները եւ հրավիրված լրագրողները արձանագրեցին, որ [illegible]

[illegible] ՅՈՒՆԻՍԵՖ ի եւ ՀԱԿ ի հետ, որի շնորհիվ [illegible] Հայաստանին հաջողվել է սոցիալական ծանր պայմաններում խուսափել համաճարակների բռնկումներից: Նա հայտարարեց, որ նախատեսված է հունիս ամսին սկսել դիֆթերիայի դեմ միջոցառումների ծրագիր:

Ասուլիսին մասնակցում էին նաեւ Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ ի մշտական ներկայացուցիչ Յոհան Ալանկոն, ՀԱԿ ներկայացուցիչ Հրայր Այանյանը, ՅՈՒՆԻՍԵՖ ի Հայաստանի գրասենյակի բժշկական ծրագրերի ղեկավար Միհայել Ալեքսանյանը:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 6 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
[illegible] ՊԱՎԵԼ ՂԱԼԹԱՔՅԱՆ
Apple Macintosh
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան. «Հայ առաքելական եվ Ռուս ուղղափառ եկեղեցիների կապերը պետք է սերտացնել»

Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը պատասխանում է Նոյյան տապան գործակալության թղթակից Հեղինե Մկրտչյանի հարցերին:

– Ռուսաստանյան թեմը Ազգային-եկեղեցական ժողովին ներկայացավ 100 պատգամավորով: Արդյոք դա նշանակու՞մ է, որ ռուսահայության թիվը 2.5 մլն. է:

– Ռուսաստանում ներկայումս բնակվում են 2.5 մլն.-ից ավել հայեր: ԽՍՀՄ տարիներին, մինչեւ 1988-ի մարդահամարը, հայության թիվը Ռուսաստանում 1.5 մլն. էր: Եթե հաշվի առնենք, որ վերջին տարիներին Ռուսաստան են ներգաղթել շուրջ 400 հազ. հայեր Ադրբեջանից, մոտ 100 հազ. արցախահայեր, ավելի քան 150 հազ. հայեր Վրաստանից եւ ԽՍՀՄ մյուս շրջաններից, ապա Հայաստանից ներգաղթածների հետ միասին ռուսահայության թիվը գերազանցում է 2.5 մլն.-ը:

– Այսպիսով, ամենամեծ հայկական գաղութներից մեկը ռուսաստանյանն է, ինչպիսի՞ն է այսօր գաղութի կյանքը:

– Բավական դժվար: Կան բազմաթիվ պրոբլեմներ: Ռուսաստան են գալիս հայեր ոչ միայն Հայաստանից, այլեւ Վրաստանից, Ադրբեջանից եւ Միջին Ասիայի հանրապետություններից: Այս առումով ունենք թե տնտեսական, եւ թե հոգեւոր ազգային շատ խնդիրներ: Ծանր է վիճակը հատկապես Կրասնոդարի, Ռոստովի եւ Ստավրոպոլի հայաշատ շրջաններում, որ տեղի կազակները բացասաբար են վերաբերվում հայության թվի ավելացմանը: Լինում են սադրանքներ: Տարածվում են հակահայկական բովանդակությամբ թռուցիկներ: Անցած տարի պայթեցվեցին Նովոռոսիյսկի հայկական խաչքարը, Անապայի Հայ միության կենտրոնը: Բազմաթիվ վայրերում, այդ թվում նաեւ Մոսկվայում, տեղի են ունեցել հայերի սպանություններ: Այս ամենից խուսափելու համար աշխատում ենք համախմբել հայ համայնքը, կազմակերպել կրոնական համայնքներ, սերտ կապեր հաստատել Ռուս ուղղափառ եկեղեցու հետ: Արդեն իսկ ստեղծված են բարեկամական փոխհարաբերություններ Ռուսաց պատրիարքի եւ ռուս բարձրաստիճան հոգեւորականների հետ, որոնք նպաստում են զանազան շրջաններում ստեղծված ազգային հակասությունների մեղմացմանը: Մյուս մեծ պրոբլեմը ներգաղթած հայության սոցիալ-տնտեսական վիճակն է: Շատ հայեր կարծում են, թե գալով Ռուսաստան, կկարողանան ապահով կյանքով ապրել: Բայց հաճախ սխալվում են: Ճիշտ է, հայրենիքում կան դժվարություններ, բայց այնտեղ գոնե տուն ունեն:

Ռուսաստանում շատերն ապրում են առանց գրանցման, որը մեծ դժվարություններ է ստեղծում հատկապես Մոսկվայում: Թեմը մեծ դժվարությամբ փորձում է օգնել Ռուսաստան ներգաղթած բոլոր հայերին:

– Ռուսահայության ո՞ր մասն է Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ:

– Բարեբախտաբար, գրեթե բոլորը: Պետք է ասել, որ վերջին տարվա ընթացքում Հայաստանից արտագաղթել են ոչ միայն առաքելականներ, այլ նաեւ զանազան աղանդավորներ, որոնք փորձում են իրենց ճյուղը տարածել Ռուսաստանում: Օրինակ, Մոսկվայում մի համայնք է ստեղծվել, որն իրեն կոչում է «Հայ առաքելական եկեղեցի» եւ որեւէ կապ չունի մեզ հետ: Ներգաղթել են նաեւ հայ կաթոլիկներ:

Ներկայումս Ռուսաստանում գործում է ավելի քան 30 եկեղեցի (եկեղեցի, աղոթատուն, մատուռ), կառուցվում է մոտ 8 եկեղեցի: Թեմում ունենք ավելի քան 30 հոգեւոր հովիվ:

– Ի՞նչ կարծիքի եք Հայ առաքելական եկեղեցու կանոնադրության մասին:

– Հայ առաքելական եկեղեցին կարիք ունի նոր սահմանադրության եւ կանոնադրության, որը հնարավորություն կտա գործել իբրեւ մի ամբողջական իրավական մարմին: Վերջին տասնամյակի ընթացքում, չնայած ձեռնարկած որոշ փորձերի, չկարողացանք այդ անել: Հույս ունենք, որ մեր նոր հայրապետը այդ գործին նույնպես կլծվի: Ներկայիս կանոնադրությունը մի փոքր հակասություն է ստեղծում ներքին եւ արտաքին թեմերի միջեւ: Յուրաքանչյուր թեմ, ի դեպ, իր կանոնադրությունն ունի, որը հիմնվում է Հայ առաքելական եկեղեցու կանոնադրության վրա: Արտերկրի թեմերը հաշվի են առնում նաեւ համապատասխան երկրի կրոնի եւ խղճի ազատության օրենքը: Այս առումով մի ամբողջական կանոնադրություն ստեղծելը դժվար է: Այսպիսով, ստեղծելով նոր կանոնադրություն, անհրաժեշտ է յուրաքանչյուր թեմի համար թողնել բաց կետ, որտեղ թեմը ընդհանուր հայտարարի կգա տվյալ երկրի սահմանադրության եւ խղճի օրենքի հետ: Ռուսաստանյան թեմը ներկայիս իր կանոնադրությունը հիմնել է հանգուցյալ հայրապետի օրոք որդեգրված կանոնադրության եւ Ռուսաստանի խղճի ազատության օրենքի վրա: Յուրաքանչյուր հայ առաքելական համայնք, որ գրանցվում է Ռուսաստանի արդարադատության նախարարությունում, նախ ստանում է մեր կողմից տրվող հաստատագիրը, որ իսկապես այն Հայ առաքելական եկեղեցու մասն է կազմում:

ՆՏ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

Զոհված ազատամարտիկների միության բողոքը կրկին ընթացքի մեջ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից Հայաստանի զոհված ազատամարտիկների միության կանոնադրության գրանցումը մերժելուց հետո, կազմակերպությունը բողոքարկել էր Սպանդարյանի ժողդատարանին: Թեեւ «Ազգը» ապրիլի 6-ի համարում անդրադարձել է դատավարության ընթացքին, այնուամենայնիվ հիշեցնենք, որ Սպանդարյանի ժողդատարանը հավանություն էր տվել նախարարության կայացրած որոշմանը եւ կարճել էր քննությունը: Չբավարարվելով դատարանի վճռից՝ կազմակերպությունն այս անգամ բողոքարկել էր Գերագույն դատարանին:

Մայիսի 3-ին կազմակերպության հարյուրավոր անդամների ներկայությամբ, Գերագույն դատարանը լսեց նրանց իրավախորհրդատուի հիմնավորումները նախարարության եւ Սպանդարյանի ժողդատարանի կայացրած «անօրինական» որոշումների վերաբերյալ, որոնք արվել էին հետեւյալ պատճառաբանությամբ՝ նախարարությունը նպատակահարմար չի համարել մեկ վարչատարածքային միավորի սահմաններում նույնատիպ կազմակերպությունների վերստին գրանցումը: Իրավախորհրդատուի կարծիքով՝ նշված կազմակերպության գործունեությունը չի սահմանափակվում մեկ վարչատարածքով եւ երկրորդ, նույն անվանումով մեկ այլ կազմակերպություն հանրապետությունում չի գործում: Նա ավելացրեց նաեւ, որ այսօրվա դատավարության մասին առավոտյան տեղյակ է պահել արդարադատության նախարար Վահե Ստեփանյանին, իսկ նա մերժել է իրենց ներկայացուցչի մասնակցությունը՝ «ինչ ուզում եք արեք» արտահայտությամբ:

Գերագույն դատարանի դատական կոլեգիան եւս խորհրդակցելուց հետո անօրինական համարեց Սպանդարյանի ժողդատարանի կայացրած վճիռը եւ կրկին նրան հանձնարարեց ընթացք տալ կազմակերպության բողոքին:

Մ. Պ.

ԵՐԵՎԱՆ

Պե՞տք է, արդյոք, գլխավոր հատակագիծ

Երեւանն ունի քաղաքաշինական զարգացման իր ծրագիրը, որով ինչպես անցյալում, այնպես էլ հիմա զբաղված են բազմաթիվ կազմակերպություններ: Կա քաղաքի գլխավոր ճարտարապետ, կա ճարտարապետաշինարարական գլխավոր վարչություն, «Երեւաննախագիծ» ինստիտուտի գլխավոր հատակագծի բաժին, քաղխորհրդի համապատասխան բաժին... բայց գլխավոր հատակագծի հետ կապված աշխատանքներ վաղուց չեն կատարվում: Գլխավոր հատակագծի ստեղծման հարցում բոլոր կառույցները համագործակցում են, սնվում են «Երեւաննախագիծ» ինստիտուտի գլխ. հատակագծի բաժնից: Վերջին անգամ այստեղ հիմնավոր հետազոտական աշխատանքներ արվել են 1987 թ. եւ այդ փաստաթղթերը, որոնք հսկայական ստենդ-գծապատկերների տեսքով շարված են հսկա սրահում (այդ թվում՝ Երեւանի տրանսպորտային համալիր գծապատկերը), հաճելիորեն զարմացրել են վերջին շրջանում տրանսպորտի խնդիրներով Երեւան ժամանած Եվրամիության ներկայացուցիչներին: Սակայն հին հետազոտությունները այսօրվա պահանջներին չեն բավարարում: Քաղաքն էլ զարգանում է վայրիվերո, կառուցվում են մեծ քանակությամբ շինություններ: Հինգ տարի է՝ վերոհիշյալ բաժինը չի ֆինանսավորվում, մասնագետները մեծամասամբ հեռացել են, իսկ հիմա վերակազմավորման խնդիրն է դրված: Վերջերս Երքաղխորհրդի նախագահ Վահագն Խաչատրյանի ջանքերով կառավարության՝ քաղաքի բյուջեին տրամադրված գումարներից հատկացվել են գլխավոր հատակագծի նախագծման աշխատանքներին: Իսկ որոնք են լինելու նոր հատակագծի խնդիրները: Այն, այսօրվա պահանջներից ելնելով, պետք է պատասխանի 3 հիմնական հարցի: Առաջին հերթին պետք է որոշվեն պետական, վարձու, սեփական՝ առանձին քաղաքացիներին տրվող հողատարածքները: Այս խնդիրը հիմա լուծման ընթացքում է: Ծագում է հողի գնահատման անհրաժեշտությունը: Երկրորդ խնդիրը հին եւ նոր քաղաքի միջեւ ժառանգականության պահպանումն է: Պետք է պահպանել տարածքային, ճարտարապետական, քաղաքաշինական ժառանգությունը: Երրորդը գոյապահպանական խնդիրն է: Սակայն հատակագծային բաժնի տնօրեն Սահակ Քեշիշյանի կարծիքով ավելի քան կարեւոր է մայրաքաղաքի կարգավիճակի հարցը: Անկախ հանրապետության մայրաքաղաքը պետք է ունենա նոր կարգավիճակ: Անհրաժեշտություն կա դեսպանատների, գործարար կենտրոնների, մի շարք այլ ծառայությունների: Այս բոլորը միասին պետք է կազմեն նոր գլխավոր հատակագծի հայեցակետը:

Քանի որ անցնում ենք շուկայական հարաբերությունների, մայրաքաղաքի վերաբերյալ էլ չեն լինի կառավարական ծրագրեր: Որոշ կարճաժամկետ ծրագրեր այնուամենայնիվ կլինեն, բայց դրանց մասին առայժմ տվյալներ չկան: Առաջ հստակ էր, թե ինչ բնակչություն ունի Երեւանը եւ ինչպիսին պետք է լինի նրա զարգացումը: Վիճակագրական տվյալներով՝ այսօր Երեւանում բնակվում է 1 մլն. 200 հազար մարդ: Ժամանակի առանձնակի փոփոխություն ասես չկա եւ կարծես իրական չեն այն խոսակցությունները, որ քաղաքից 300 հազար, իսկ հանրապետությունից 800 հազար մարդ է բացակայում: Բայց մեկնողներն իսկապես շատ են, իսկ նրանց տեղը լրացրել են փախստականները: Եւ քաղաքաշինության ամենացավոտ հարցերից մեկը՝ բնակարանների պահանջարկը, որ նախկինում արդեն դժվար լուծելի էր, այժմ ճգնաժամային վիճակում է: Հերթագրվածների հին՝ 41 հազարանոց բանակին այսօր գումարվել է երեք անգամ ավելի մեծ նոր զանգված: Ո՞րն է ելքը:

Կապիտալիստական աշխարհում բնակարանային շինարարության զարգացման 3 ուղիներ կան: Շինարարությունը իրագործվում է առաջինը՝ մասնավոր անձանց միջոցներով, երկրորդը՝ քաղաքացիներին բանկերից տրված վարկերի միջոցով, երրորդը՝ անհատ ձեռներեցների բիզնես-նախագծերի հիման վրա կառուցվում են ամբողջական թաղամասեր եւ տները զատ-զատ վաճառում: Ետպատերազմյան Ամերիկայում մեկ ու կես տասնամյակում կարողացան այս եղանակով լուծել բնակարանային խնդիրը, իսկ քաղաքացիները շատ կարճ ժամկետում մարեցին պարտքերը: Մեր պետությունը այդպիսի վարկեր առայժմ չի կարող տրամադրել բոլոր ցանկացողներին, բայց կարող են հայտնվել անհատ ձեռներեցներ, ստեղծվել՝ հիմնադրամներ... Հավանական է, որ Հայաստանի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներդրումը չշրջանցի նաեւ այս ոլորտը:

Գլխավոր հատակագծում բնակարանային համալիրի հետ մեկտեղ պետք է ապահովել նաեւ սոցիալական ենթակառուցվածքները: Այսօր, չունենալով նոր դպրոցներ, մանկապարտեզներ, պոլիկլինիկաներ, մարզահրապարակներ եւ այլ անհրաժեշտ հաստատություններ կառուցելու հնարավորությունը, այնուամենայնիվ պետք է նրանց տեղերը պահպանել հատակագծում: Կարեւոր հարց է նաեւ, թե ինչպես պետք է կառուցվի Երեւանը: Բնակելի շենքերը արդյոք նույն 16 հարկանի իրար վրա շարված ուղղահայաց խրճիթնե՞ր են լինելու՝ առանց լույսի, առանց ջրի, առանց վերելակի...

Քաղաքում, անցումային այս փուլում, ապօրինությունները շատ են եւ տգեղ: Իր հերթին Երեւանի շրջակա բոլոր հողատարածքների սեփականաշնորհումից քաղաքն սկսեց խեղդվել: Յուրաքանչյուր քաղաք իր տարածքի 20 տոկոսի չափով պետք է զարգանալու տեղ ունենա, մինչդեռ այսօր Երեւանին այդպիսի ոչ մի հնարավորություն չի տրված: Քաղաքը հասարակարգի հայելին է, զարգանում է նույն օրինաչափություններով եւ խնամքի կարիք ունի:

[illegible]

Խմբագրական լրացումներ

«Ազգի» երեկվա համարի 4-րդ էջում լույս տեսած «Ո՞ւմ է պետք ազատ մամուլը» հոդվածի առաջաբանում տեխնիկական պատճառներով դուրս են մնացել հետեւյալ տողերը, որի համար հայցում ենք մեր ընթերցողների ներողությունը: «Պարոնայք «ժողովրդավարներ», հարգեք չորրորդ իշխանությունն ու նրա ներկայացուցիչներին» տողից հետո կարդալ.

«Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք ամերիկյան «Թայմ» հանդեսի մայիսի 8-ի համարից վերցված Հենրի Գրանուալդի հոդվածը, չնչին հապավումներով»:

Նույն համարի 8-րդ էջում տպագրված «Ինչպիսի բաժնետոմս են գնում Ռուսաստանի կառավարության անդամները կամ առաջին դեմքը» հոդվածը պատրաստված է ըստ «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթի այս տարվա 13-րդ համարում զետեղված համանուն հոդվածի:

Խմբագրություն

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հայերի ցեղասպանության ճանաչումը չի վնասի Իսրայելին

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՄՆԱՐՔ: Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման քաղաքական օգուտը կգերազանցի այդ անհրաժեշտ քայլի քաղաքական վնասները: Այս հետեւությանն է արվում հայերի ցեղասպանության 80-ամյակի առնչությամբ իսրայելական մամուլում հրապարակված հոդվածների մեծ մասում: Մնարքին հայտնեցին Հայկական անկախ մամլո կենտրոնում:

Ապրիլի 24-ին Իսրայելի հայրենադարձության նախարար Յաիր Ցաբանը Երուսաղեմի հայ համայնքի ոգեկոչման ժողովում խոստացավ, որ եկող ուսումնական տարվանից հայերի ցեղասպանությունը կմտնի Իսրայելի բոլոր դպրոցական ծրագրերի մեջ:

«Ջերուզալեմ փոստ» թերթն ապրիլի 24-ին զետեղեց ՆԱՏՕ-ում ԱՄՆ-ի նախկին ներկայացուցիչ եւ նախագահ Ռեյգանի վարչակազմի նախկին աշխատակից Ռեյմոնդ Թանտերի հոդվածը: Ընդգծելով, որ հենց ինքը թուրք-իսրայելական լավ հարաբերությունների կողմնակիցներից է եղել, Թանտերը նշում է, որ հայոց ցեղասպանության ճանաչումը չի վնասի Իսրայելի քաղաքականությանը, բայց կբարձրացնի պետության բարոյական վարկը: Հիշեցնելով Հիտլերի 1939 թ. օգոստոսի 22-ի «Հիմա ո՞վ է հիշում հայերի ցեղասպանության մասին» հայտարարությունը, պրոֆեսոր Թանտերը նշում է, որ եթե աշխարհը չմոռանար այդ ոճիրը, հնարավոր կլիներ կանխել հրեաների ցեղասպանությունը:

ՀՌԱԿ պատգամավորական 4-րդ ժողովը՝ ընտրություններին ընդառաջ

ՀՌԱԿ Հանրապետական վարչության քաղաքական զեկուցումը

Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 29-ին Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության 4-րդ պատգամավորական ժողովը, որի ընթացքում Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը հանդես եկավ քաղաքական զեկուցմամբ, որը որոշ կրճատումներով ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը:

Հաշվետու ժամանակաշրջանի քաղաքական կյանքի վրա իրենց զգալի անդրադարձն են ունեցել իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի Հանրապետության տնտեսական կացությունը և իրավիճակն արտաքին քաղաքական բնագավառում: 1993 թ. ամռանից մինչև 1994 թվականը Լեռնային Ղարաբաղում ստեղծված դժվարին ռազմական կացությունն աստիճանաբար շտկվեց, որում հիմնական դեր խաղաց հայրենիքի պաշտպանող հայ զինվորը:

Նույն ժամանակաշրջանում կուսակցությունը լուրջ ուշադրություն հատկացրեց տնտեսական բարեփոխումների և շուկայական համակարգի ձևավորման խնդիրներին: Հատկանշական է, որ 1993 թվականին վարչակազմի գործելակերպի մեջ մեր մասնանշած թերությունների հնարավոր հետևանքներն ամբողջ ուժով դրսևորվեցին 1994 թ. ընթացքում:

Կուսակցության համար ակնհայտ էր, որ 1988 թ. ավերիչ երկրաշարժի վերքը չբուժած Հայաստանի համար դյուրին չէր լինելու կենտրոնացված պլանավորման վրա հիմնված տնտեսության վերափոխումը շուկայական համակարգի:

Թվում էր, թե Արցախյան ազատամարտը պետք է հարկադրեր իշխանություններին առավել գործուն լինել ինչպես արտադրական ներուժի պահպանման և օգտագործման, այնպես էլ տնտեսական բարենորոգումների իրականացման ասպարեզում: Իրականում, ՀՀՇ վարչակարգի քառամյա իշխանության տարիներին Հայաստանում ազգային արտադրության ծավալն զգալիորեն կրճատվեց, որն իր հիմքում ուներ հայտնի առարկայական պատճառներ: Սակայն տնտեսական աննախադեպ անկումը գերազանցապես վարչակարգի վարած անսկզբունք քաղաքականության հետևանք էր:

Չորս տարվա ընթացքում վատնվեցին հասարակության կուտակած տնտեսական աճի ապահովման անհրաժեշտ ներքին ռեսուրսները: Հեղափոխականորեն իրագործված ազգային համակարգի ջախջախումը չուղեկցվեց համապատասխան շուկայական հաստատությունների ձևավորմամբ: Արդյունքը եղավ այն, որ հասարակությունը զրկվեց տնտեսության կազմակերպման, կառավարման ու կարգավորման թեկուզև ոչ արդյունավետ, բայց գործող համակարգից: Շուկայական բարեփոխումների հստակ իրատեսական ծրագրի բացակայության և շուկայական համակարգի հաստատմանն ուղղված մեկուսի և հատվածական գործողությունների արդյունքում տնտեսությունը հասցվեց աղետալի վիճակի, իսկ հասարակությունը խոր ճգնաժամի: Ցնցումային շրջադարձի ծանրությունը և զրկանքների ողջ բեռը դրվեց բնակչության ուսերին, որի եկամուտները նվազել են մի քանի անգամ: Դժվարին իշխանությունը հրապարակավ հրաժարվել էր իր հպատակների կենսամակարդակը երաշխավորելուց, որը ցանկացած կառավարության անբաժան պարտականությունն է:

Ներկա պայմաններում բնակչության հետագա գոյատևումն անհնարին է առանց արտերկրյա զանազան նվիրատվությունների, վարկերի և հումանիտար օգնությունների: Երկրի արտադրական և գիտական հզոր ներուժ ունեցող Հայաստանը հայտնվել է պարտապանի վիճակում: ՀՀ արտաքին պարտքը, որը 1991 թ. ընդամենը 10 մլն դոլար էր, 1994 թ. վերջին հասել է ավելի 340 մլն դոլարի: Ցավալին սակայն այն է, որ փոխառու միջոցների շուրջ 60 տոկոսը օգտագործվել է անմիջականորեն սպառման նպատակով, ինչը կրկին ու կրկին վկայում է, որ հանրապետության արտադրական ներուժը վատնող վարչակարգն ի զորու չէ վերարտադրել այն:

Արտադրության խոր անկմամբ պայմանավորված բնակչության տնտեսապես ծայրահեղ անապահովվածության պայմաններում, սոցիալական ծրագրերի կրճատման իշխանությունների քաղաքականությունը էլ ավելի է մեծացնում բնակչության տառապանքները: Մինչև այժմ գերազանցապես պետական մենաշնորհ հանդիսացող դպրոցական և առողջապահական համակարգերը գտնվում են ծանրագույն վիճակում: Կառավարությունը ստեղծել է պայմաններ, երբ մարդը, որպես աշխատանքի գործոնի ստացած եկամուտները անհամեմատ ավելի ցածր են, քան նրանից պահանջվում են դրա պահպանման ամենաանհրաժեշտ ծառայությունների դիմաց: Բնակչության եկամուտների և հատկապես աշխատավարձի նկատմամբ կոշտ քաղաքականությունը համարվում է «խնայամիտ», որը իրականում կործանարար է: Աշխատանքի դիմաց ստացված եկամուտները 3-4-ի փոխարեն կազմում են ազգային եկամտի մեկ-երրորդ մասը: Աշխատանքի ու դրա կրողի մարդու շահագործման այդպիսի անհեռատես քաղաքականությունը բացառում են շուկայական մեխանիզմների լիարժեք կիրառումը և նվազեցնում արտադրության աճի հնարավորությունները: Նման քաղաքականության հետևանքն է կրճատվող ծնունդները, աճող մահացությունը: Առաջացել է մի նոր զանգվածային երևույթ տնտեսական տարագրություն: Այսօր հարյուր հազարավոր հայաստանցիներ, կորցնելով հայրենիքում իրենց ոչ թե շատ տանելի կյանք ապահովելու հույսը, իրենց գիտելիքները ու փորձը, ձեռներեցությունը, աշխատասերն ու կարողությունը ներդրել են օտարության մեջ, բազմապատկելով այդ երկրների հարստությունը:

Կառավարության կողմից որդեգրված, սոցիալ-տնտեսական ոլորտում նվազագույն միջամտության քաղաքականության իրագործման հետևանքով, կառավարման համակարգի վերին և ստորին օղակների, կառավարության և ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններում ծագեցին վտանգավոր միտումներ: Դրանք տեսանելիորեն դրսևորվեցին, օրինակ, «Հայէներգոյի» հայտնի ինքնագործունեության, կենտրոնական բանկ-կոմերցիոն բանկ-խաբված ավանդատուներ [illegible] մինչ այսօր օրենքով չսահմանված հարաբերությունների անլուծելի հանգույցի ձևով:

Ազգային կարգախոսների շղարշի տակ իրականացվող 20 տոկոս անհատույց սեփականաշնորհումը շատ դեպքերում վերածվեց ծառայողական ձեռնարկատերերի հրամանագրային նշանակման:

Շուկայական համակարգի հիմքը հանդիսացող մանր և միջին բիզնեսին աջակցելու պետական քաղաքականության փոխարեն, առկա է անտարբերությունը: Սեփականաշնորհված հողը, իշխանությունները իրենց ազատված համարեցին գյուղատնտեսական արտադրությանն օժանդակելու խնդրից և ավելացրին ճնշումը:

Չնայած կառավարության ծրագրի մի շարք վիճելի դրույթներին, ՀՌԱԿ պատգամավորները ԳԽ-ում քվեարկեցին վերջինիս օգտին՝ նկատի ունենալով իշխանության խոստումները 3-4 ամսում ապահովել առաջին շրջափուլի արդյունքները և անձնական պատասխանատվություն կրել անհաջողության համար, ինչպես նաև հուսալով, որ մեծածավալ վարկերը կօգտագործվեն ժողովրդի ծանր սոցիալական վիճակը բարելավելու համար: Անցել են սակայն այդ 4 ամիսները, իսկ էական տեղաշարժեր չկան:

Վերոհիշյալ մոտեցումները տնտեսական բնագավառում, պահանջում էին ուժեղ պետական և հասարակական վերահսկողական մեխանիզմների ձևավորում, որը ետին պլան մղվեց: Արդյունքում, ոտնատակ արվեց օրինականությունը, ստեղծվեց բռնության և անպատժելիության մթնոլորտ՝ հազարավոր ընտանիքներ զրկվեցին կուտակած խնայողություններից, դարձան ապօրինությունների ու խարդախությունների զոհ: Ինչ խոսք, այդ բոլորը չէր կարող նպաստել ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, տնտեսական շինարարության արդյունավետ ընթացքին, ժողովրդի կարող ուժերի միավորմանը և համագործակցությանը:



Հաշվետու ժամանակաշրջանում մենք հարաբերություններ ենք ունեցել և առանձին խնդիրների շուրջ համագործակցության եզրեր փնտրել հանրապետության քաղաքական ասպարեզում եղած բոլոր քաղաքական ուժերի հետ՝ պահպանելով հավասարակշիռ «ցենտրիստական» մեր դիրքորոշումը, մշտապես ելնելով գաղափարախոսական և քաղաքական ուղղվածության ազատական սկզբունքներից:

Մենք բազմիցս փորձել ենք համագործակցության եզրեր գտնել իշխանությունների և ՀՀՇ-ի հետ, թե խորհրդարանական օրենսդիր գործունեության, թե միջկուսակցական հարաբերությունների բնագավառում: Սակայն համոզվել ենք, որ թե իշխանությունները, թե ՀՀՇ-ն այդ փոխհարաբերությունների վերաբերյալ ունեն ուրույն մոտեցում, այն է՝ միանշանակ ենթարկվածությունը: Ավելին, հատկապես դրսևորվեց այսպես կոչված «աջ» բլոկի նախաստեղծման ժամանակաշրջանում:

Մեզ հարցնում են, արդյոք ճի՞շտ էր ՀՌԱԿ ինքնուրույն վարքագիծը, չէ՞ որ ՀՀՇ-ն որդեգրել է նույն գաղափարախոսությունը և քաղաքական կուրսը, իրեն համարելով լիբերալ դեմոկրատական սկզբունքների ջատագով: Հանուն ընդհանուր գործի, չէ՞ր կարելի համագործակցել և նույնիսկ ենթարկվել: Վստահաբար կարող ենք ասել՝ ոչ: Եվ խնդիրը միայն արժանապատվության մեջ չէ: Մենք տարբերվում ենք թե մոտեցումների, թե գործելակերպի տեսակետից: ՀՀՇ-ն ըստ էության հեղափոխականություն է դրսևորել տնտեսական և պետականության քաղաքական բնագավառում, «ուժեղը օրենքն է» թեզին հակադրելով «հարգում է, գերիշխում ուժեղը» թեզը: Կան նաև տեսական, օրենսդրական, տնտեսական և սոցիալական, կադրային և կազմակերպական բազմաթիվ այլ խնդիրներ, որտեղ դրսևորվում է մեր դիրքորոշումների տարբերությունը:

Այժմ կարևոր ենք համարում անդրադառնալ ՀՌԱԿ ներկուսակցական զարգացումներին, որոնք նախընտրական արշավի ծավալման տեսակետից արժանի են հատուկ ուշադրության:

Ինչպես գիտեք, ՀՌԱԿ 2-րդ պատգամավորական ժողովից հետո (1993 թ. ապրիլ և 2-րդ փուլը հուլիս), որն ընդունեց կուսակցության ծրագիրը, քննարկեց կանոնադրության մասնակի փոփոխությունների հարցը և ընդունեց կարևորագույն որոշումներ, հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել նաև ՀՌԱԿ 3-րդ արտահերթ պատգամավորական ժողովը (1994 թ. մայիս), որը քննարկել և հաստատել է ՀՌԱԿ կանոնադրության մեջ մասնակի փոփոխություններ, կանոնադրության հավելվածը, ինչպես նաև վավերացրել է պատգամավորական խմբակցության ժամանակավոր կանոնակարգը և կանոնադրությունը: Ժողովը ընտրեց նաև նոր մարմիններ՝ ՀՌԱԿ կարգապահական ատյանը և հաշվեքննիչ հանձնաժողովը, որոնց գործունեության մասին կխոսենք մի փոքր ավելի ուշ: Պատգամավորական ժողովում ընդունվեցին բանաձևեր սահմանադրական գործընթացի և Արցախյան հիմնահարցի շուրջ ՀՌԱԿ դիրքորոշումների մասին: Կարող ենք վստահաբար ասել, որ այդ ժողովները կարևոր փուլեր հանդիսացան կուսակցության կայացման և հետագա զարգացման գործընթացում, իսկ ընդունված որոշումներն ու բանաձևերն իրենց լիովին արդարացրեցին գործնական աշխատանքում:

Հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար տեղի են ունեցել Հանրապետական վարչության և դիվանի նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են քաղաքական և կազմակերպչական կարևորագույն հարցեր: Սակայն, ինքնաքննադատաբար պետք է ասել, որ Հանրապետական վարչությունը առավելապես զբաղվել է բուն կուսակցական, բայց մեծամասամբ «օպերատիվ» խնդիրներով, հաճախ ժամանակի և հնարավորության չունենալով կատարել հեռանկարային ծրագրերի մշակում երկարաժամկետ կանխատեսումների և հետազոտական աշխատանքի արդյունքների հիման վրա: Կատարված առանձին աշխատանքները որակ չեն կազմում, բայց միևնույն ժամանակ ցույց են տալիս դրանց անհրաժեշտությունը: Հանրապետական վարչությունը, ցավոք, ամբողջապես չդարձավ կուսակցության «ուղեղային կենտրոնը», որտեղ պետք է ծնվեին նոր գաղափարներ և նախաձեռնություններ: Հենց այդ պատճառով առաջացավ հետազոտական ծառայության ստեղծման գաղափարը, որն այսօր կազմավորման մեջ է, և հուսով ենք, ժամանակի ընթացքում կլրացնի նշված բացը:

Արդյունավետ չի եղել նաև հետադարձ կապը սկզբնական կազմակերպությունների հետ՝ չնայած ակումբներ պարբերաբար առաքվող շրջաբերականներին, տեղեկատվական նյութերին և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանին բնորոշ են լուրջ ներկուսակցական զարգացումներ, որոնց արդյունքում ՀՌԱԿ-ը թե՛ քանակական և թե՛ որակական առումով արել է առաջընթաց: Կուսակցականների թիվը կրկնապատկվել է: Հետագա տարածում են ստացել կուսակցական կառույցները: Այսօր ՀՌԱԿ-ի կազմում գործում են 3 շրջանային վարչություն, և մոտ 50 ակումբ: Կուսակցության 3-րդ արտահերթ համագումարից հետո իրականացվել է որոշակի ներկուսակցական քաղաքականություն, որը նպատակաուղղված էր ավելացնել նույն տարածաշրջանում գործող ակումբների կուսակցականների թվաքանակը և ոչ թե ակումբների թիվը: Դրա հետ մեկտեղ նոր ակումբներ են բացվել Երևանում, Գյումրիում, Արտաշատում, Սիսիանում, Արմավիրում:

Այսօր կուսանդամների զգալի մասը (53,3 տոկոսը) ներկայացնում են կրթության, մշակույթի, առողջապահության և գիտարտադրական բնագավառը, 15,3 տոկոսը մասնավոր ձեռնարկչական ոլորտը: Կուսակցականների 65,5 տոկոսը 30-50 տարեկան քաղաքացիներ են, մինչև 30 տարեկան կուսակցականները կազմում են 22,7 տոկոսը: Քիչ չեն կանայք՝ 22,8 տոկոսը, սակայն ցավով նրանք դեռ համապատասխանորեն ներկայացված չեն ՀՌԱԿ ղեկավար մարմիններում: Կուսակցականների գերակշիռ մասն ունի բարձրագույն կրթություն: Կարծում ենք թվերը պերճախոս են:

Կուսակցության գաղափարական, քաղաքական գործունեությունը անկատար կլիներ, եթե մենք չփորձեինք մեր գաղափարներին ու մոտեցումներին հաղորդակից անել ժողովրդի լայն զանգվածները: Այդ տեսակետից, անգնահատելի է կուսակցական մամուլի դերը, և այդ ծանր բեռն իր ուսերին է կրում «Ազգ» օրաթերթը, որն առանց կեղծ համեստության այսօր դասվում է լավագույնների մեջ:

Ինչպես գիտեք, վերջերս «Ազգին» ընկերակցեց «Պայքար» ռամկավար ազատական, հասարակական-քաղաքական ամսագիրը: Դա ՀՌԱԿ հնագույն օրգաններից մեկն է, որի հրատարակման շարունակումը Հայաստանում մեզ համար և մեծ պատիվ է և մեծ պատասխանատվություն:

կուսակցական

Լույս են տեսել «Պայքար»-ի 1,2 և 3 միացյալ համարները և բառացիորեն օրեր լույս կտեսնի 4-րդ համարը: Այդ համարները ցույց են տալիս, որ ի դեմս «Պայքարի» ոչ միայն ՀՌԱԿ-ը, այլև հանրապետության հասարակայնությունը ձեռք են բերել արժեքավոր, հեռանկարային, գիտատեսական պարբերական:

ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը հաշվետու ժամանակաշրջանում հատուկ ուշադրություն է դարձրել արտաքին կապերի համակարգման խնդրին: Այդ նպատակով ստեղծվեց հատուկ բաժին, որը զբաղվում է Հայաստանի Հանրապետությունում գործող դեսպանությունների ու օտարերկրյա կազմակերպությունների հետ հասարակական կապերի հաստատման գործով: Շնորհիվ դրա աշխուժացել են կուսակցության ղեկավար մարմնի ներկայացուցիչների շփումները ու փոխադարձ այցելությունները դիվանագետների, Հայաստան այցելող քաղաքական գործիչների հետ: Առանձին ուշադրություն դարձվեց Միջազգային Լիբերալի հետ մեր կապերին, որոնք հիմնավորվել էին այդ կազմակերպության 1993 թ. Բուդապեշտում գումարած խորհրդաժողովի շրջանակներում: Այժմ ակտիվ հարաբերությունների մեջ ենք այդ կազմակերպության հետ: Միջազգային այդ ամբիոնը կցանկանայինք ծառայեցնել մեր ազգային շահերին: Առաջիկա ազգային ժողովի ընտրությունների առիթով կապեր ենք հաստատել եվրոպական մի շարք ազատական կուսակցությունների հետ, որոնց ներկայացուցիչներին հրավիրելու ենք Հայաստան:

Հայաստանի անկախությունը, թվում է, բավարար ազդեցություն էր ունենալու նաև հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման վրա: Սակայն իշխանությունների անհեռատես քաղաքականության պատճառով աստիճանաբար անորոշություն ու շփոթ է ստեղծվում այդ հարաբերություններում: Պետականության կայացման և պետական քաղաքականության կարգախոսների ֆոնի տակ արհեստական հակասություններ են ստեղծվում մեր ժողովրդի երկու հատվածների միջև, ինչն իր արտահայտությունն է գտնում սփյուռքահայ ավանդական կառույցների և կազմակերպությունների նկատմամբ դրսևորվող քամահրանքով: Դա կարող է սփյուռքահայությունը զրկել քաղաքական անհրաժեշտ առաջնորդությունից դրանով իսկ ձախողելով սփյուռքահայության մասնակցությունը հայրենիքի հզորացմանը:

«Մեկ ազգ, մեկ հայրենիք» սկզբունքից, ինչպես նաև գաղափարական ընդհանրությունից ելնելով, մենք շարունակում ենք սերտորեն համագործակցել և համազգային խնդիրներում մեր գործունեությունը համակարգել սփյուռքում գործող Ռամկավար ազատական կուսակցության հետ: Կառույցների միասնության բացակայությունը չի խանգարում, որ մենք նույն տեսակետներն ու մոտեցումները հանդես բերենք ազգային քաղաքական շատ հիմնահարցերում: Իսկ երբ լինում են որոշակի տարբերություններ մեր միջև, դրանք բացատրվում են սփյուռքի առանձնահատկություններով և Հայաստանում տիրող ներքաղաքական իրավիճակով: Այդ առումով, շատ օգտակար ու գործնական քայլ են ունեցել ՌԱԿ-ՀՌԱԿ ղեկավար մարմինների համատեղ խորհրդակցություններն ու փոխադարձ այցելությունները: Մենք, լավագույնս օգտվելով ՌԱԿ-ի հարուստ կենսափորձից և ավանդույթներից, կարող ենք և պետք է դրանք զարգացնենք, կատարելագործենք մայր հողում:

Անկախ պետականության հաստատմամբ մարմնավորվեց հայրենիքի գաղափարը: Սակայն, վերջին շրջանում իշխող խմբավորման անդամների կողմից խեղաթյուրված ձևով է ներկայացվում պետության հասկացությունը, շփոթ առաջացնելով պետություն, պետականություն և իշխանություն հասկացությունների միջև: Խնդիրն այն է, որ միանգամայն տարբեր ինստիտուտների նույնացումն իր մեջ պարունակում է վտանգ, քանզի երբ պաշտպանում ես ներկա վարչակազմը, իշխանություններին՝ ուրեմն պետական մտածելակերպ ունես, պետականության կայացման կողմնակից ես, երբ ոչ՝ հակապետական: Արդյոք, մեկ անգամ ևս, հասարակության պառակտման, պետության և ժողովրդին հակադրելու մի փորձ չէ՞ դառնում այսօր նման տեսակետը: Պետությունը, ժողովրդավարական պետությունը, իր մեջ ընդգրկում է ողջ քաղաքական համակարգը, թե՛ օրենսդիր և թե՛ գործադիր իշխանությունները,



քաղաքական կուսակցությունները, անկախ վերջիններիս կեցվածքից, իշխող թե ընդդիմադիր, դատական համակարգը, բանակը, ողջ լրատվությունը: Չեն կայանա կուսակցությունները, չեն գտնի իրենց արժանի տեղը Հայաստանի քաղաքական համակարգում, ուրեմն չի կայանա բազմակուսակցականությունը՝ ժողովրդավարական պետության անհրաժեշտ և պարտադիր պայմաններից մեկը, չի կայանա ժողովրդավարական խորհրդարանը և արդյունավետ գործող կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության նախագահը, գործադիր իշխանության մարմինները պարտավոր են նպաստել բազմակուսակցականության հաստատմանը Հայաստանում և ոչ թե անօրինական ձևով կասեցնել այս կամ այն կուսակցության գործունեությունը (ինչպես ՀՅԴ-ի դեպքում), փակելով կուսակցական մամուլը և անգամ այն պարբերականները, որոնց խմբագիրներն ունեն կուսակցական պատկանելություն, փորձելով Հայաստանում հաստատել բազմակուսակցականության պատրանք, նպաստելով արհեստական կազմակերպությունների ստեղծմանը, որոնք ընդունում են իշխող կազմակերպության հեգեմոն դերը:

Ամբողջ հարցը այսօր կայանում է նրանում, թե ինչպիսի պետություն են ուզում տեսնել Հայաստանի ներկայիս իշխանությունները: Նախկինի տոտալիտա՞ր համեմված անկախությամբ, ժողովրդավարության, ազատական տնտեսության մասին անփույթ խոսակցություններով, թե՞ օրենքի վրա հիմնված, մարդու իրավունքները ամենից բարձր դասող, ազգային հիմնախնդիրները Հայ դատը հետապնդող, սեփականության բազմաձևության վրա հիմնված պետություն, որը ևս կարող է իրական բարգավաճում պարգևել մեր ազգին, ապա և անկախ հայրենիքը խորհրդանիշների շերտից վերածվել կենսաձևի, ազգային հոգատարության առարկայի, որ յուրաքանչյուր հայ իրեն զգում է տերը իր երկրի և չի ձգտում թողնել հայրենի օջախը միայն այն պատճառով, որ ապահովված չեն կյանքի ամենատարրական պայմանները:

Հաշվետու ժամանակաշրջանում, Ռամկավար ազատական կուսակցության գործունեության կարևորագույն բնագավառներից է հանդիսացել Սահմանադրական գործընթացը:

1993 թ. ՀՀ Սահմանադրության ՀՌԱԿ տարբերակում արտացոլված են եղել Ռամկավար ազատական դրսևորումները ազգային պետականության սկզբունքների, ՀՀ պետական կառույցների ձևի ու կառավարման համակարգի, դատական իշխանության և տեղական լայն ինքնակառավարման մասին: ՀՌԱԿ-ի կողմից մշակված ՀՀ հիմնական օրենքի նախագծի հիմքում ընկած է այն ճշմարտացի գաղափարը, որ Սահմանադրությունը կոչված է լուծելու երկու գլխավոր խնդիր՝ ամրագրել ժողովրդի լիակատար իշխանությունը, մարդու և քաղաքացու միջազգային ճանաչում ստացած բոլոր իրավունքներն ու ազատությունները, հուսալի դեմոկրատական կառուցակարգեր հիմնադրել դրանց արդյունավետ իրականացման համար:

ՀՌԱԿ ձեռնարկած հաջորդ քայլը հինգ այլ կուսակցությունների հետ (ՀՅԴ-ի, ՀԴԿ-ի, Ագրարային կուսակցության, Հանրապետական կուսակցության, ԱԻՄ) քաղաքացիական համաձայնության խորհրդի հիմնադրումն էր և համատեղ սահմանադրության միասնական նախագծի մշակումը: Վեց ընդդիմադիր կուսակցությունները, որոնք կրող են տարբեր գաղափարախոսության, նպատակ էին դրել մշակել ոչ թե կուսակցական ռանկի տեսություն ներկայացնող փաստաթուղթ, այլ ժողովրդավարական պետության ժողովրդավարական Սահմանադրություն: Եվ անհրաժեշտ է նշել, որ խնդիրը հիմնականում ստացավ իր լուծումը: Սակայն քաղաքացիական Սահմանադրության խորհրդի աշխատանքը հասկանալի է մի կարևոր հանգամանքով ևս. վերջին տարիների ընթացքում երբևէ չի եղել նույնման արդյունավետ բազմակուսակցական կառուցողական գործունեություն, համատեղ աշխատանք, որտեղ առկա էր և փոխզիջման և քաղաքակիրթ վերաբերմունքի մթնոլորտ: Կարևորում ենք նաև նշված նկատառումը որպես ապացույց, որ Հայաստանում ընդդիմությունը ընդունակ է համախմբվել, համատեղ գործելու և հասնելու արդյունքի, երբ առկա է կոնկրետ նպատակը, երբ լրջորեն վտանգված է ժողովրդավարությունը:

Վերջին օրերին մամուլում հրապարակվեց Հայաստանի հիմնական օրենքի նոր վերամշակված նախագիծը, որը արդյունք է համալրված հանձնաժողովի աշխատանքի: ՀՌԱԿ-ը անշուշտ հանդես կգա Սահմանադրության նախագծի մանրամասն վերլուծությամբ և գնահատականներով: Սակայն ակնհայտ է, որ մասնագիտական առումով շատ ավելի կատարյալ լինելով նույն մարմնի կողմից մշակված նախորդ փաստաթղթից, նախագիծը ներառում է իշխանության ինստիտուտներից մեկի՝ նախագահի համար մեծագույն լիազորություններ:

ՀՌԱԿ-ը գտնում է, որ իշխանությունը պետք է լինի ուժեղ: Իսկ դա, ըստ մեզ, ենթադրում է, որ ուժեղ պետք է լինի թե՛ նախագահը, թե՛ խորհրդարանը, թե՛ կառավարությունը, թե՛ դատական համակարգը: Ուժեղ և անկախ իրարից: Այդ խնդիրը, ըստ մեզ, ոչ լավագույն լուծումն է ստացել առաջարկվող փաստաթղթերում: Իսկ ինչ վերաբերում է այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին է տեղական ինքնակառավարումը, ապա այն ուղղակի բացակայում է: Այնպես որ Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումից հետո, երբ Սահմանադրության ընդունումը հնարավոր դարձավ հանրաքվեով, միանգամայն հնարավոր է դառնում Հայաստանում օրենսդրական ամրագրումը ավտորիտար ղեկավարության, որը խիստ կդժվարացնի երկրի տնտեսական և քաղաքական զարգացումը ժողովրդավարության և ազատականության ճանապարհով:

Փորձ կատարելով վերլուծել ՀՌԱԿ խորհրդարանական գործունեությունը, նախ և առաջ հարկ ենք համարում անդրադառնալ կուսակցության պատգամավորական խմբակցության հիմնադրմանը: Ինչպես հայտնի է, ՀՀ խորհրդարանի ձևավորումը հետևեց բազմակուսակցության հաստատմանը Հայաստանում: ՀՌԱԿ խմբակցության անդամների գերակշռող մասը ընտրվել էր կամ Կոմկուսի, կամ էլ ՀՀՇ-ի կողմից:

ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը մեծ ուշադրությամբ ընդունեց պատգամավորական խմբակցության կանոնադրությունը, որով փորձ է կատարվում համակարգելու խորհրդարանային ներկայացուցչական գործունեությունը ՀՌԱԿ քաղաքական մարմինների հետ, ՀՀ Գերագույն խորհրդի ամբիոնը արդյունավետ օգտագործելու նպատակով:

ՀՌԱԿ քաղաքական մարմինները ավելի վաղ պետք է հանդես բերեին անհրաժեշտ վճռականություն, սկզբունքայնություն կուսակցությունն ազատել հանրապետությունում վարկաբեկված որոշ գործիչներից, որոնք հայտնի էին իրենց պատեհապաշտ քաղաքական կեցվածքով, ցանկացած իշխանությանը ծառայելու մղումով: Ցավով պետք է արձանագրել, որ նման հանդուրժումը բացասական անդրադարձավ կուսակցության հեղինակության վրա, հասարակության որոշ շրջանակներում բյուր կարծիք ստեղծելով կուսակցության սկզբունքայնության մասին: Չէ՞ որ այդ մարդիկ հաճախ օգտագործում էին ԳԽ-ի ամբիոնը, արտահայտում կուսակցության դեմ հակառակ կարծիք:

Այս մասին պետք է նշել նաև ՀՌԱԿ անդամ ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների դրական գործունեությունը հատկապես վերջին ամիսների ընթացքում: Նրանց կողմից ներկայացվեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի նախագիծը: ՀՌԱԿ-ի կողմից ներկայացվեցին նաև օրենսդրական լրացումներ ՀՀ քրեական օրենքներում, որոնց նպատակն էր բացառել զանգվածային կեղծիքները ընտրությունների ընթացքում:

Քանի որ խոսք գնաց առաջիկա ընտրությունների օրենսդրական կարգավորման մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ այդ հարցը առանձին օրակարգային խնդիր է, բայց արժե կանգ առնել միայն մի քանի նկատառումների վրա:

ՀՌԱԿ-ը միշտ գտել է, որ առաջիկա խորհրդարանը պետք է լինի պրոֆեսիոնալ, որ պատգամավորները պետք է զբաղված լինեն միայն խորհրդարանական գործունեությամբ:

ՀՌԱԿ-ը զգուշացրել է և զգուշացնում է հասարակությանը, որ ներկա օրենքը լայն հնարավորություն է տալիս բարձրագույն օրենսդրական մարմիններ թափանցել մարդկանց, որոնք մի կողմից հնարավորություն ունեն ճնշում գործադրել ընտրողների որոշակի խավերի վրա, իսկ մյուս կողմից ենթարկվել գործադիր իշխանության թելադրանքին:

ՀՌԱԿ-ը գտնում է, որ հավասարակշռվածության խախտումը համամասնական և մեծամասնական սկզբունքի միջև առաջիկա ընտրություններում անտրամաբանական է և անհեթեթ, չի նպաստում ժողովրդավարական հասարակության ձևավորմանը: Երբ մեր ժողովուրդը հանդես չբերի զգոնություն, չգնա ընտրությունների կատարելով իր քաղաքացիական պարտքը, ապա առաջիկա խորհրդարանը իր որակական կազմով կզիջի ներկայիս օրենսդրական մարմնին և չի կարողանա կատարել անգամ այն համեստ դերը, որը վերապահված է իրեն Սահմանադրական հանձնաժողովի կողմից ստեղծված հիմնական օրենքի նախագծով:

Անդրադառնալով մեր հետագա գործունեության և անելիքների խնդիրներին, ասենք, որ այն հիմնական գծերով շարադրված է կուսակցության նախընտրական քաղաքական պլատֆորմում, որը ներկայացվել է ակումբների քննարկմանը մինչև պատգամավորական ժողովը:

Նկատի ունենալով Ազգային ժողովի ընտրությունները, կցանկանայի ժողովի ուշադրությունը հրավիրել հատկապես խորհրդարանական առաջիկա գործունեության վրա: ՀՀ Սահմանադրության ընդունմամբ լայն ասպարեզ կբացվի օրենսդրական գործունեության համար: Մասնավորապես, մենք առաջնահերթ խնդիր ենք համարում ազատ տնտեսության վրա հիմնված շուկայական հարաբերությունների իրավական հիմքերն ամրագրող օրենքների և նորմատիվ ակտերի մշակումը: Տնտեսական օրենսդրություն, նրա առանձին ճյուղերի ստեղծումն ու կատարելագործումը պետք է հստակ երաշխիքներ սահմանի մասնավոր ձեռնարկչական գործունեության համար, խրախուսի մասնավոր սեփականության զարգացումը և ապահովի սեփականատերերի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: ՀՌԱԿ իրավագիտական խումբը արդեն սկսել է այդ աշխատանքները, ինչպես նաև քաղաքացիական դատավարական օրենսգրքի, տնտեսական իրավարար դատարանի, քաղաքացիության, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի, ՀՀ Ազգային փոքրամասնությունների կարգավիճակի մասին և այլ օրենքների մշակումը: Միաժամանակ, առաջիկա խորհրդարանական գործունեությունը պետք է ուղղված լինի այն բանին, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի օրենքով պաշտպանված լինի ամենատարբեր դրվագներում, աշխատանքը կամ աշխատունակությունը կորցնելու դեպքում, որ պետության կողմից երաշխավորված լինի և ընտանիքի ապրուստի կենսանվազագույն զամբյուղը:

Հատուկ ուշադրություն է պահանջում պետության հարկային քաղաքականությունը, որը պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերի առանձին շահութաբեր, նոր զարգացող կամ հանրապետության համար կենսական կարևորության, հեռանկարային և այլ տնտեսական բնագավառների, ինչպես նաև քաղաքացիների եկամուտների հարկման նկատմամբ: Առանձնապես պետք է վերահսկելի դարձնել իրավապահ, ֆինանսական և հարկային մարմինների գործունեությունը, որոնք երբեմն իրենց չտեսնված կողմնակալ, իսկ երբեմն նաև հակաօրինական գործողություններով մեծապես խոչընդոտում են մասնավոր ոլորտի զարգացմանը:

Եզրափակելով մեր խոսքը, կցանկանայինք շեշտել, որ սույն զեկուցման մեջ մեր ներկա իրողությունների գնահատականների առանձին գույների խտացումը արդյունք է հասարակության և պետության ապագայի համար մեր խորապես գիտակցված անհանգստության: Մենք լի ենք վճռականությամբ հետևողականորեն շարունակելու հանրապետությունում ժողովրդավարական և ազատական սկզբունքների արմատավորման, ազգային պետության և քաղաքացիական հասարակության կայացման մեծ և դժվարին գործը: Եվ հենց այդ վճռականությամբ մենք պետք է գնանք դեպի Ազգային ժողովի ընտրություններ, քաղաքական բովի [illegible] ձեռնելով մեր միակ և փոխանցելի ծիլերը ժողովրդի հետ:

ՄՇԱԿՈՒՅԹ

Վահան Թեքեյանի աշխարհը՝ գրականագետների զեկուցման նյութ

Թեքեյանական շաբաթը շարունակվում է

Երեկ, Գրողների տանը կայացավ թեքեյանական շաբաթի հերթական միջոցառումը՝ ԹՄՄ-ի, Գրողների միության և Ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի ջանքերով կազմակերպված գիտական նստաշրջանը՝ նվիրված Վահան Թեքեյան բանաստեղծի, արձակագրի, կուսակցական, հասարակական գործչի մահվան 50-րդ տարելիցին: Նախասրահում բացվել էր Թեքեյանի արխիվային նյութերն ու գրքերը ներկայացնող մի փոքրիկ ցուցահանդես, որը կազմակերպել էր Ազգային գրադարանը:

Ինչպես արդեն հաղորդել ենք մեր թերթի նախորդ թեքեյանական շաբաթի մյուս միջոցառումների մասին պատմելիս, բոլոր ձեռնարկները նպատակ ունեն Թեքեյանի անունը հարազատ և բազմակողմանի ճանաչելի դարձնել հանրությանը: Եվ նախատեսվածից կես ժամ ուշ սկսված գիտական այս նստաշրջանն էլ այդ նպատակն էր հետապնդում: Գրողների և Թեքեյան 2 միությունների անունից գիտաժողովի աշխատանքները բացեց Դավիթ Մուրադյանը, որը ընդգծեց, թե Վահան Թեքեյանին վերաբերող գիտաժողովը իր տեսակի մեջ առաջինն է: Նա տեղեկացրեց, թե բոլոր զեկուցումները Թեքեյանի մի քանի անտիպների հետ կտպագրվեն առանձին գրքով: Առաջին բացման խոսքի պատիվը տրվեց գրականության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանին: «Սովորաբար մենք հիշատակում ենք ծննդյան թվերը: Այսօր խախտում ենք այդ սկզբունքը այս օրերին մեր ազգի միասնության մասին խոսելու պատեհ արժանավոր առիթն օգտագործելով»: Պրն. Ջրբաշյանը ընդգծեց, որ Թեքեյանն իր կենտրոնաձիգ մարդկային էությամբ մեծ դեր է խաղացել, կենդանի կամուրջ եղել արեւմտահայ եւ սփյուռքահայ գրականությունների միջեւ: Ինչքան էլ Վահան Թեքեյանը իբրեւ քաղաքական գործիչ պատկանում էր ռամկավարներին, նա իր բանաստեղծական մնայուն ստեղծագործությամբ ամբողջ հայ ժողովրդի սեփականությունն է: Հայրենիքի թեմություններին նա նեռադաս էր, որովհետեւ «երազեն տարբեր», «ավելի լավ» հայրենիքի հանդեպ հավատն ու լավատեսությունը զորավոր էին: Չնայած երկրորդ զեկուցող բանասիրության դոկտոր Վլադիմիր Կիրակոսյանն իր ելույթը վերնագրել էր «Թեքեյանի լեզուն», բայց չբավարարվեց ընդամենը դրա մասին խոսելով: Նրա բանախոսությունը Թեքեյան բանաստեղծի գրական գեղարվեստական համարյա թե բոլոր երեսների ուրվագիծն արեց: Բանախոսի ասելիքը կյանք մահ երազ պատրանք հույս հավատ խորհրդանշական պատկերների պատում նկատելով նա մասնավորապես ընդգծեց, որ բանաստեղծի լեզվի հիմնախնդիրը սերն է. «Սերն ամենից առաջ քնարական աշխարհայացք է»: Վահան Թեքեյանն օժտված է սովորական բարդ զգացմունքային պարզեցնելու շնորհով: «Անակնկալ չի լինի, որ Վահան Թեքեյանին կոչենք սոնետի արքա պատվանդանով», առաջարկեց նա իր ելույթն եզրափակելով: Բանասիրության թեկնածու Արզար Ափինյանը ներկայացրեց Թեքեյանին իբրեւ ազգային գործչի: «Ամենից նրբամիտ հոգին մեր բանաստեղծների մեջ, ամենից երեւելին մեր հասարակական կյանքում մեծապես նպաստել է, որ մեր կյանքում աղետալի ընդհարումներ չլինեն»: Բանաստեղծի կյանքը զոհողություն նկատելով, պրն. Ափինյանը ընդգծեց Թեքեյանի նպատակը՝ հեռու պահել ազգին անդունդից, որի եզրին էինք դարասկզբին: Խոսք այսրոտեական դիտելով Թեքեյան կուսակցականի հեղափոխությունը մերժող սկզբունքը, նա հիշեցրեց մի հանգամանք. թե Թեքեյանի կուսակցական գործունեությունը ընդգծելի է այն դեպքում, երբ ազգը հանգիստ վիճակում է, այլապես ավելի շատ ազգային է դառնում նրանց «առաքելությունը»: Կուսակցական թերթերի խմբագիր լինելով էլ Թեքեյանն ազատ մտավորականի իր կերպարը չաղարտեց: Աչքի ընկավ հայ մամուլի չոր ու չար լեզվի մասին խիստ դիտողություններով: Հաջորդ ելույթն ավելի շատ պատմական փաստագրերից քաղած նյութի կարեւոր վերլուծություն էր: Հեղինակ Կարեն Դալլաքյանը ներկայացրեց Թեքեյան քաղաքական գործչի ատենապետի ստորագրած թուղթը ուղղված Պողոս Նուբար փաշային: Այնտեղ հրապարակավ առաջին պաշտոնական բողոքն էր հայտնվում Ալեքսանդրապոլի դաշնագրի դեմ: Պրն. Դալլաքյանը հիշատակեց օրերս ՀՌԱԿ-ի հրավիրած դռնբաց համագումարը ասելով, որ ժողովրդավարության այս դրսեւորումը Թեքեյանի ժամանակների օրգանական շարունակությունն է: Բանասիրության դոկտոր Ազատ Եղիազարյանը ներկայացրեց Վահան Թեքեյան թարգմանչին: Մեզ ծանոթ Վահան Տերյանի Բոդլերի «Չարիքի ծաղիկների» թարգմանությանն ունի նաեւ մեկ ուրիշ տարբերակ, որը Թեքեյանի գրչի արդյունքն է: Նա բնագրից թարգմանել է Շեքսպիրի «Սոնետները»: Պրն Եղիազարյանը նշեց, որ այսօրվա թարգմանիչները Թեքեյանից պիտի սովորեն բնագրին խիստ հավատարիմ մնալ: Բանասիրական գիտությունների թեկնածու Գրիգոր Հակոբյանի Թեքեյանի արձակի մասին խիստ դժվարամատչ սահմանումների մեջ ներփակված նյութն իբրեւ բանավոր խոսք նվազ ընկալելի էր: Բանախոսը Թեքեյանի «արձակի ախտավորությունը» (Վ. Թ.) ներվածի հաղթանակով բացատրեց, կամ ավելի պարզ՝ արձակը որակեց իբրեւ ներքվածի ծավալուն շարադրանք:

Լոս Անջելեսի միջազգային հարաբերությունների ինստիտուտի դասախոս Թամարա Հովհաննիսյանի խոսքը տարբերվում էր մնացածներից. այն ավելի շուտ անպաճույճ ուրախության արձագանք էր. նրա համար Թեքեյանի համընդհանուր այս ճանաչումը «մեզ դեպի մեզ բերող ճամփա է»: Գիտական նստաշրջանը եզրափակելով պրն. Ջրբաշյանն ասաց, որ Հայաստանի գրականագետներն արդեն պատրաստ են բանաստեղծի երկերի լիակատար ժողովածուն հրատարակելու:

Այնուհետեւ ներկաները հրավիրվեցին Գրողների տան երկրորդ հարկ, որտեղ Վիլեն Չարչօղլյանի ղեկավարած օպերային թատրոնի կամերային նվագախմբի, Վահրամ Թարիկյանի երգեցողության, սամդային ու «ֆանգր» հյուրասիրության ուղեկցությամբ ԹՄՄ-ն իր հաջորդ ձեռնարկն իրականացրեց. Բեյրութում տպված Վահան Թեքեյանի «50 ներբողած» հոբելյանական հրատարակության եւ Եղվանդ Ազատյանի «Գրական գեղարվեստական սեւեռումներ» գրքերի շնորհանդեսով նախկին «գիտականությամբ» լցված մթնոլորտը թարմացնելով: Տեղեկացնենք, որ Թեքեյանի հատորյակի 2-ական օրինակներ նվիրվեցին համալսարանի, Ակադեմիայի ազգային գրադարաններին:

Հիշեցնենք, որ թեքեյանական շաբաթի շրջանակներում այսօր, ժամը 15-ին, Եղվանդ Քոչար պատկերասրահում կբացվի գրաֆիկայի ցուցահանդես, այնուհետեւ տեղի կունենա ՀԹՄ միության հիմնադրման հանդիսությունը:

ԱՆԱՀԻՏ ՏՈՆԱՆԵՓՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վ. Թեքեյանը՝ Կարիկ Պասմաճյանի թարգմանությամբ

1982-ի գարնանը հերթական անգամ Հայաստան էր եկել ֆրանսահայ բանաստեղծ, թարգմանիչ, արվեստի բացառիկ գործերի հավաքորդ Կարիկ Պասմաճյանը, որի յուրաքանչյուր այցը հայրենիք նշանավորվում էր որեւէ կարեւոր, հաճելի անակնկալով. մեկ պատահական մի աճուրդում գնած Մարտիրոս Սարյանի գլուխգործոցներից էր Հայաստան բերում, մեկ՝ սփյուռքահայ նշանավոր նկարիչների արժեքավոր ստեղծագործություններից, մեկ՝ ծրագրում եւ իրականացնում էր որեւէ հետաքրքիր ցուցահանդես:

Այդ անգամ նա «Հայրենիքի ձայն»-ի խմբագրություն եկավ՝ բերելով մի գիրք:

– Նոր գի՞րք է, հարցրեցի:

– Ոչ, սիրածս բանաստեղծին թարգմանած եմ անգլերեն: Ու մեկնեց գիրքը: Վահան Թեքեյանի բանաստեղծությունների երկլեզու ընտրանին էր, որ լույս էր տեսել 1981-ին, ԱՄՆ-ում:

Ուրախ էի, որ չէր հեռացել բանաստեղծությունից, թեեւ անվան կողքին ավելի ու ավելի հաճախ էին երեւում «գործարար», «արվեստի հավաքորդ», «միլիոնատեր» ու նման այլ «տիտղոսներ»: Թեքեյանի ընտրանին թարգմանական երկրորդ գիրքն էր՝ Պարույր Սեւակից եւ «Անգլագիր հայ բանաստեղծներ» հատորներից հետո:

«Կկարծեմ, Թեքեյանը մեր ամենեն մեծ, բայց մինչեւ վերջ չգնահատված բանաստեղծներեն մեկն է: Թեեւ շատ դժվար էր անգլերեն թարգմանել զինք, բայց հանձն առի, որովհետեւ շատ կսիրեմ», ասաց իր մեղմ, բայց մի քիչ ծակող հայացքը հառած ինձ ու սկսեց կարդալ մի քանի բանաստեղծություն հայերեն, ապա՝ անգլերեն թարգմանությամբ:

Ակնհայտ է, որ թարգմանչին հաջողվել էր վերարտադրել թեքեյանական տողը, խոսքի գեղեցկությունը, բանաստեղծական տողի կշռույթը:

Եվ այսօր, երբ Հայաստանի գրական մթնոլորտը լցված է թեքեյանական ոգով, կարեւոր է ուշադրությունից դուրս չթողնել այս ոչ ծավալուն, բայց արժեքավոր գրքույկը: Այն առիթ տվեց հիշել նաեւ Կարիկ Պասմաճյանին՝ մի մարդու, որն իր վառ, անսովոր կյանքով ու գործունեությամբ հաճախ էր ստիպում խոսել իր մասին, բայց որի առեղծվածային ու ողբերգական անհետացումից հետո այսպես անարդար լռություն պահեցինք:

ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Նշվեց ճապոնական «ոսկե շաբաթը»

Երեկ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ մշակութային կապերի ընկերության հայ ճապոնական ասոցիացիայի նախաձեռնությամբ կազմակերպված ցերեկույթը նվիրված էր ճապոնական «ոսկե շաբաթին» (ապրիլի 29-ը՝ կայսեր ծննդյան, մայիսի 3-ը՝ սահմանադրության, մայիսի 5-ը՝ տղաների օրն է): Ասոցիացիայի նախագահ, ԳԱԱ-ի «Ագրոբիոտեխնոլոգիա» միավորման տնօրեն Էդուարդ Հակոբյանը իր ողջույնի խոսքում ասաց, որ 1947-ին ընդունված ճապոնական սահմանադրությունը պատերազմում պարտված երկրին թույլ տվեց դասվել աշխարհի զարգացած երկրների շարքը, դառնալով 21-րդ դարի երկիր: Նշելով, որ 373 հազար քմ տարածքում (72 տոկոսը լեռներ) ապրում է 125 մլն. մարդ, նա ավելացրեց, որ մենք նույնպես կարող ենք «առանց ծնկի գալու» հաղթահարել դժվարությունները, որ այդ գործին կօգնի նաեւ երկու երկրների մեջ բացված կամուրջը: Երեւանի պետհամալսարանի ուսանողուհի Ծովինար Բաքայանը պատմեց ճապոնացիների տոնական օրերի, իսկ թարգմանչուհի Իվետա Խաչատրյանը՝ երեխաների դաստիարակության մասին: Միջոցառմանը մասնակցող ճապոնուհիներ Կոխարո Խոնդան եւ Սյոկո Իտոն երգեցին ճապոնական ժողովրդական երգեր:

ՅՈՒ. Ս.

Եգիպտոսը խնդրում է վերադարձնել փարավոնների գանձերը

Եգիպտացիներն ասում են. «Եթե դու ջուր ես խմել Նեղոսից, ապա անպայման կվերադառնաս Եգիպտոս»: Օրերս նման միտք արտահայտեց նաեւ երկրի մշակույթի նախարար Ֆարուկ Հոսնին Կահիրեում տեղի ունեցած մամլո ասուլիսում: Նա մտադիր է ԱՄՆ-ին, Ֆրանսիային եւ մի շարք ուրիշ պետությունների դիմել՝ իրենց թանգարաններում պահվող հին Եգիպտոսի արվեստի գործերի մի մասը վերադարձնելու խնդրանքով: Փարավոնների ժամանակաշրջանի հնությունների հարուստ հավաքածու է ցուցադրված Լուվրում, ինչպես նաեւ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանում: «Մենք շատ բան չենք խնդրում. Եգիպտոսում պեղումների ժամանակ հայտնաբերված եւ արեւմուտք տարված յուրաքանչյուր 50 հազար առարկայից գոնե մեկը», ասաց նախարարը:

Աֆրիկացիներն սկսել են սափրվել եվրոպացիներից մի քանի դար առաջ

Աֆրիկայի հենց կենտրոնում՝ Զաիրում հայտնաբերված հնագիտական գտածոների վերաբերյալ այս հաղորդումը ակնհայտորեն գոհունակություն չի պատճառի սպիտակամորթների գերազանցության քարոզիչներին: Պարզվում է, որ 80 հազար տարի առաջ, Քարե դարում, երբ ներկայիս եվրոպացիների նախնիները դեռ չէին սափրվում եւ մազերը չէին կտրում, Աֆրիկայում արդեն սափրվում էին: Ջորջ Վաշինգտոնի անվան ամերիկյան համալսարանի հնագետները Զաիրում պեղումների ընթացքում հայտնաբերել են ոսկրից պատրաստված բավական բարդ գործիքներ, այդ թվում՝ սափրվելու սարքեր եւ ածելիներ: Եվրոպայում այդ կարգի առաջին գտածոները վերաբերում են մ.թ.ա. 12-րդ հազարամյակին:

Ասոշիեյթեդ պրես-Իզվեստիա

ԿԻՆՈԱՇԽԱՐՀ

Բերգմանի ոգին կթեւածի Նյու Յորքում

Մինչ արվեստագետի հայրենիքում անախորժություններն անպակաս են

Նյու Յորքը պատրաստվում է այս տարվա ամռանը մեծ շուքով նշելու աշխարհահռչակ սցենարիստ եւ կինոռեժիսոր Ինգմար Բերգմանի 75-ամյակը: «Երկու միլիոն դոլարի արժողությամբ փառատոնը գուցե անհամեմատ լինի, որով երբեւէ մեծարել են որեւէ կինոգործչի», գրում է այդ առիթով «Ինտերնեշընլ Հերալդ Տրիբյուն» թերթն իր ապրիլի 9-ի համարում: Այդ օրերին Բերգմանի բոլոր 40 ֆիլմերը ցուցադրվելու են,

դրանցից մի քանիսն՝ առաջին անգամ, ԱՄՆ-ում: Միաժամանակ ներկայացվելու են նաեւ նրա երկու բեմադրությունները: Աշխարհի տարբեր հեղինակությունները կմասնակցեն այդ հանդիսություններին, սակայն Բերգմանն երեւի ներկա չգտնվի: «Կարծում եմ, նա պարզապես անհարմար է զգում, որ այդպիսի ճոխ փառատոն են կազմակերպում իր պատվին», ասել է Շվեդիայի Արքայական դրամատիկ թատրոնի տնօրեն Լարս Լոֆգրենը: «Երբ սկսի ճանապարհորդել, հետ կկնկի իր աշխատանքից, որ նրա համար կյանքի իմաստն է», նշել է փառատոնի կազմակերպիչ Բրուկլինի երաժշտական ակադեմիայից Կարեն Բրուքս Հոփկինսը՝ ավելացնելով. «Մենք շատ ուրախ կլինեինք, որ գար, բայց չենք ցանկանում ստիպել նրան: Ամեն դեպքում, Բերգմանի ոգին այնտեղ է իր աշխատանքներում»:

Ավելացնենք, որ նույն թերթի ավելի վաղ հաղորդումների, Բերգմանի հարեւանները Ստոկհոլմում փորձել են վտարել նրան Օստերմալմ շքեղ թաղամասում գտնվող իր աշխատանքային մեկ սենյականոց ստուդիայից պատճառաբանելով, որ «բազմաթիվ երիտասարդ զույգեր շատ ավելի կարիք ունեն այդ բնակատարածությանը, քան Բերգմանը»:

Ճիշտ է, Բերգմանն այդ բնակարանում հազվադեպ է լինում, բայց նա արդեն 45 տարի է, ինչ զբաղեցնում է այն եւ այնտեղ է մտածում ու գրել իր ֆիլմերից շատերի սցենարները: Այնպես որ, ըստ երեւույթին, հեշտությամբ չի զիջի իր դիրքերը, չնայած Շվեդիայի օրենքով, նրան կարող են զրկել բնակարանից, այն չի օգտագործվում պատճառաբանությամբ: Այդ առնչությամբ տեղական «Էքսպրեսսեն» թերթին տված իր կարճ հարցազրույցում Բերգմանը նշել է, որ տունն իր համար զգացմունքային, հոգեւոր արժեք է ներկայացնում:

Բերգմանը, որն այժմ 76 տարեկան է, այդ տանն է ստեղծագործել իր շատ վաղ շրջանի «Յոթերորդ կնիքը» (1956) եւ «Մորու բացատը» (1957), ինչպես եւ «Գայլի ժամը», «Ճիչ եւ շշուկներ» եւ այլ ֆիլմեր: «Ես ձգտում եմ ճշմարտությունն ասել մարդկանց վիճակի մասին: Ինձ համար կարեւորը կապն է մարդկանց եւ կյանքի հետ», խոստովանել է արվեստագետը մի առիթով: Թվում է, թե այդ կապը մի տեղ սերտ է ու մեթոդիկ, մեկ ուրիշ տեղ թույլ ու բռնական, քանի որ 1976-ին էլ նման մի անախորժ դեպք էր տեղի ունեցել հանրահռչակ ռեժիսորի հետ: Ներկայացման փորձերից մեկի ժամանակ նրան կառավարական հարկային տեսչությունից էին «հրավիրել հարկերից խուսափելու կասկածանքով հարցաքննելու»: Ճիշտ է, ամեն ինչ բարեհաջող է ավարտվել, բայց կատարվածից վիրավորված նրբազգաց արվեստագետն երկրից հեռացել է եւ միայն ինն տարի անց վերադարձել այնտեղ:

Հ. Օ.

ՀԱՅԱՍՏԱՆ

Ֆուտբոլի ֆեդերացիան շնորհակալ է

ՍԱՄՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության Հայաստան-Իսրայել ընտրական փուլի հանդիպումն իր անցավ կազմակերպական ամենաբարձր մակարդակով: Կարճ ժամանակում թե ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիան եւ թե «Հրազդան» մարզահամալիրի ամբողջ կոլեկտիվն ամեն ինչ արեցին արժանապատիվ ներկայանալու այդ պատասխանատու քննությունը: Ուրախալի է, որ խաղից առաջ ու խաղից հետո կազմակերպված մամուլի ասուլիսներում Իսրայելի հավաքականի մարզիչ [illegible] հատուկ գոհունակությամբ հայտնեց թե ջերմ ընդունելության, թե հյուրանոցային բարձր պայմանների, թե լավ մարզադաշտի ու լավ խաղադաշտի մասին: Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիան ուզում է իր շնորհակալությունը հայտնել այն կազմակերպություններին ու առանձին անհատներին, որոնք օգնել են Հայաստան-Իսրայել խաղը բարձր մակարդակով կազմակերպելու, մասնավորապես պաշտպանության նախարարությանը եւ հատկապես փոխնախարար Աստվածատուր Պետրոսյանին, ՆԳ նախարարությանը (Վահան Պողոսյան, Լեւոն Հարությունյան), «Հայկական ավիաուղիներ» ընկերությանը (Շահեն Պետրոսյան), «Արմենիա» հյուրանոցային համալիրին (Գուրգեն Անդրեասյան), «Դվին» հյուրանոցին (Վաչե Թորոսյան), ԻՄԱԿ ձեռնարկությանը (Գագիկ Պողոսյան), «Հրազդան» համալիրին (Արուս Աղաբաբյան), «Հայ FM» ռադիոկայանին, Կոտայքի շրջանի ղեկավարներին (Հովհաննես Հովհաննիսյան), Աբովյանի քաղաքային մարզադաշտի ադմինիստրացիային եւ բոլոր այն ֆուտբոլասերներին, ովքեր եկել են մարզադաշտ ականատես լինելու մարզական այդ մեծ տոնահանդեսին:



Հայաստանը ֆուտբոլայի՞ն

Ֆուտբոլային նոր պատիժներ

Ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայի կարգապահական կոմիտեն իր հերթական նիստում անդրադարձավ վերջին խաղերում գրանցված անախորժ դեպքերին ու խախտումներին: Մասնավորապես լուրջ քննարկման նյութ դարձավ Գորիսում տեղի ունեցած «Զանգեզուր»-«Երազանք» հանդիպումը, որը 87-րդ րոպեին կիսատ էր մնացել: Կարգապահական կոմիտեն որոշեց մեկ խաղով որակազրկել Գորիսի մարզադաշտը, քանի որ հանդիպման ընթացքում կողմնակի անձինք մտել են խաղադաշտ, խանգարել եւ անհնարին մթնոլորտ ստեղծել խաղի համար: Ցավալի է, որ նման տեղի են ենթարկվում հատկապես զոհացիկները, որոնք ֆուտբոլի շատ են սիրում եւ իրենց անձնական ջանքերով, կարճ ժամանակում գեղեցիկ մարզադաշտ են կառուցել, լավ ֆուտբոլ տեսնելու ակնկալիքով: «Զանգեզուր»-«Երազանք» հանդիպումը պետք է վերախաղարկվի եւ մայիսի 6-ին տեղի է ունենալու Արտաշատի քաղաքային մարզադաշտում: Կարգապահական կոմիտեի որոշման մեջ նշվում է, որ Գորիսում տեղի ունեցած հանդիպման տեսուչ Սերգեյ Սամվելյանը եւ գլխավոր մրցավար [illegible] միջոցների չեն դիմել, ուղղակի խաղն անցնի նորմալ պայմաններում: [illegible] «Զանգեզուրի» եւ թե «Երազանքի» ղեկավարները [illegible] ֆուտբոլիստների [illegible] այդ խաղում մրցավարը 3 հոգու հեռացրել է դաշտից, իսկ 7-ին դեղին քարտ ցույց տվել: Հեռացվածներից հարձակվող Անդրանիկ Հովհաննիսյանը, որը վերջերս է հայտարարել «Զանգեզուրում», մրցավարին հայհոյելու համար որակազրկվել է 3 խաղով եւ տուգանվել 25 հազար դրամով: Մրցակցին հարվածելու համար նույն պատժին է արժանացել նաեւ «Երազանքի» խաղացող Սարգիս Արմաղանյանը: Մրցավարին հարվածելու համար Գեղամ Սուքիասյանը («Երազանք») որակազրկվել է 1 տարով եւ տուգանվել 100 հազար դրամով: «Երազանքի» դարպասապահ Արթուր Գրիգորյանը 2-րդ զգուշացումն ստանալու համար որակազրկվել է մեկ խաղով ու տուգանվել 10 հազար դրամով: Վերջինիս թիմակից Ալեքսանյանը 3 դեղինի համար որակազրկվել է 2 խաղով եւ տուգանվել 15 հազար դրամով:

Պատժվել են նաեւ այլ թիմերի խաղացողներ, որոնք հանդիպումների ժամանակ աչքի են ընկել կոպտությամբ: «Ցեմենտի» խաղացող Վ. Գյուլբուդաղյանը որակազրկվել է 1 խաղով եւ տուգանվել 10 հազար դրամով: Վերջինիս խաղընկեր Խ. Եսոյանը որակազրկվել է 3 խաղով ու տուգանվել 25 հազար դրամով:

Արտաշատի «Դվին» թիմի խաղացողներ Վ. Գյուլամիրյանը եւ Ա. Նազարյանը որակազրկվել են 2 խաղով եւ տուգանվել 10 հազարական դրամով: «Քասախի» խաղացող [illegible] նույն պատժին է արժանացել: Ա. Սարգսյանը («ԲՄԱ Արաբկիր») որակազրկվել է 2 խաղով, տուգանվել 15 հազար դրամով: Հ. Գեւորգյանը («ԲՄԱ») 1 խաղով, 10 հազար դրամով: Ա. Առաքելյանը («Լոռի») 1 խաղով, 10 հազար դրամով: ■

ԽՃԱՆԿԱՐ

Ֆուտբոլի պատվին հոսանք չօգտագործել

«Եվրոպա-96»-ի ընտրական փուլի խմբային մրցաշարի Վրաստան-Գերմանիա խաղի առթիվ, որն ավարտվեց հյուրերի հաղթանակով 2-0 հաշվով, Վրաստանի կառավարությունը կոչով դիմեց Թբիլիսիի բնակչությանը` չօգտագործել էլեկտրաէներգիա, որպեսզի Թբիլիսիի մարզադաշտը լուսավորվի խաղի ընթացքում:

Կուռլովիչը որակազրկվեց

Աշխարհի քառակի եւ օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն, գերծանր քաշային ծանրորդ, 33-ամյա Ալեքսանդր Կուռլովիչը (Բելառուս) արգելված դեղամիջոցներ օգտագործելու համար, միջազգային ֆեդերացիայի կողմից որակազրկվեց երկու տարով:

Պատվերով սպանությո՞ւն

Օգտագործելով մի քանի ամիս տեւած ամերիկյան պրոֆեսիոնալ բեյսբոլիստների գործադուլը, անվանի բեյսբոլիստ Դեյվ Շոսկոսկին պայմանագիր ստորագրեց «Ատլանտա Բրեյվիս» թիմի հետ: Դա մեծ դժգոհություն առաջացրեց գործադուլ անող խաղընկերների մոտ: Պայմանագիրը հազիվ ստորագրած Շոսկոսկին, երբ պտտվում էր իր հյուրանոցի մոտ, նրա վրա կրակեց անհայտ մի անձ: Շոսկոսկին տեղում մահացավ: Մարդասպանը հայտնեց, որ ինքը Շոսկոսկին էր ուզում իրեն խփել: Կասկածներ կան, որ մարդասպանը կաշառված է եղել պրոֆեսիոնալ բեյսբոլիստների կողմից:

ՏԱՐԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռուդի Կրոլը Եգիպտոսում

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐԶԱՅԱՆ,
Վալանս, Ֆրանսիա

Ինչպես հայտնի է վերջին տարիներին Եվրոպայի եւ Հարավային Ամերիկայի ֆուտբոլիստների մեծ արտահոսք է սկսվել դեպի Ճապոնիա: Բայց կան նաեւ մի քանի նախկին խաղացողներ, որոնք իբրեւ մարզիչներ մեկնում են աշխատելու Աֆրիկայի կամ Միջին Արեւելքի երկրներում:

Այսպես, անցկացրած խաղերի քանակով Հոլանդիայի հավաքականի ռեկորդակիր Ռուդի Կրոլը, որը հիմա 45 տարեկան է, մեկնել է Եգիպտոս մարզելու այդ երկրի օլիմպիական հավաքականը, որն ուզում է գալիք տարի Ատլանտայում կայանալիք օլիմպիական խաղերի ուղեգիր ձեռք բերել: Եգիպտոսի օլիմպիական թիմի հետ ծանոթությունը շատ զարմացրեց Կրոլին: Բայց մինչեւ հիմա արդեն այդ զարմանքները շարունակվում են: Ռուդի Կրոլն ասում է. «Վերջերս, երբ [illegible] էինք կատարում Եվրոպայում եւ պատրաստվում էինք խաղալ Հունգարիայի թիմերից մեկի հետ, մեկ շաբաթ անընդհատ անձրեւ էր տեղում: Ես նկատում էի, որ պարապմունքների ժամանակ եգիպտական մեր թիմի դարպասապահը մարզվում էր սովորական (առանց գամերի) կոշիկներով: Ես կարծում էի, որ նա այսպես մարզումների ժամանակ իրեն ավելի հանգիստ է զգում եւ հավանաբար խաղից առաջ կփոխի կոշիկները: Բայց խաղն սկսելու ժամանակ ես նրան տեսա նույն կոշիկներով: Երբ հարցրեցի եգիպտացի իմ օգնականին, նա ասաց, որ Եգիպտոսում էլ դարպասապահը նույն կոշիկներով էր խաղում, քանի որ այլ կոշիկներ չուներ»: Երբ Կրոլը վերադարձավ Կահիրե, կարգադրեց, որ թիմի համար գնեն 30 զույգ ֆուտբոլային խաղակոշիկներ: Եգիպտոսում Կրոլն ուրիշ շատ տհաճ եւ իր համար զարմանալի դեպքերի հանդիպեց: Այսպես, երբ նա կազմակերպեց իր «նոր» օլիմպիական թիմի առաջին ստուգողական հանդիպումը, հավաքական հրավիրված 24 խաղացողներից միայն 11-ը եկան մարզադաշտ: Եվ եթե Եգիպտոսի սպորտի նախարար Աբդել Մոնեիմ Էմարան չմիջամտեր, ապա Ռուդի Կրոլը պատրաստվում էր վերադառնալ Հոլանդիա: Հենց այս նախարարն էր, որ 1994 թ. աշխարհի առաջնության սկսվելուց մի քանի օր առաջ հրավիրեց Ռուդի Կրոլին ստանձնել Եգիպտոսի օլիմպիական հավաքականի ղեկը: «Այաքսի» նախկին խաղացողն առաջին հոլանդացին եղավ, որ կարողացավ հաստատվել Նեղոսի ափերում: Եգիպտոսում փորձեցին աշխատել 3 այլ հոլանդացիներ` Ռուիսերը, Կոր Պոտը եւ Լանկինը, սակայն երեքն էլ համբերություն չունեցան եւ վերադարձան հայրենիք: Եգիպտոսում միայն Ռուդի Կրոլն է մնացել, բայց մինչեւ ե՞րբ:

Ռուդի Կրոլը

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Եվրոպացիներից ո՞վ ձեռնոց կնետի չինացիներին

ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
Բեյրութ-Երեւան

Շուտով, Չինաստանի Թիենցին քաղաքում կմեկնարկի սեղանի թենիսի աշխարհի 43-րդ առաջնությունը: Դժբախտաբար, ներկա չի լինի սեղանի թենիսի նվիրյալ, միջազգային ֆեդերացիայի նախագահ Իչիրո Օգիմուրան: Նա մահացել է քաղցկեղից: Օգիմուրայի ավանդը Եվրոպայում (60-ական թվականներին, որպես Շվեդիայի փոստամանդ հավաքականի մարզիչ) եւ Ասիայում սեղանի թենիսի զարգացման գործում անսահման է: Այսօր, այս աննման մարզաձեւը լայն ժողովրդականություն է վայելում երկրագնդի բոլոր անկյուններում:

Պրոֆեսիոնալիզմը մեծ դեր ունի կայծակնային արագությամբ թռչող փոքր գնդակի եւ գերարդիական ռակետներով «զինված» խաղի մակարդակի բարձրացման մեջ:

Խաղը հսկայական փոփոխությունների է ենթարկվել: «Մեղավորը» ոչ թե չինացի մարզիկների բազմազան ռետիններն են, այլ եվրոպական նորագույն արտադրողների սեղանի թենիսային իրերը:

Երկրագնդում տեղի ունեցած քաղաքական եւ սոցիալ-տնտեսական տեղաշարժերը պատճառ են դարձել մարզիկ մարզիչների արտագաղթի: Այսօր, եվրոպական զարգացած շատ երկրների ակումբներում եւ հավաքականներում խաղում են մի շարք չինացի մարզիկ մարզուհիներ, ռուսներ, ռումիններ, բուլղարներ, հարավսլավացիներ, հայեր... Աշխարհի չեմպիոն դառնալու համար տիտանական աշխատանքներ են պետք: Իսկ թանկագին տիտղոսը պահելու համար հարկավոր է երկաթյա կամք, հաղթելու բուռն ձգտում: Ամենեւին պատահական չէ, որ աշխարհի չեմպիոն, ֆրանսիացի Ժան Ֆիլիպ Գասիենը գտնվում է համաշխարհային դասակարգման ցուցակի միայն 7-րդ հորիզոնականում: Իսկ ովքե՞ր են ոսկե մեդալների համար մրցակցելու հիմնական թեկնածուները:

Բելգիացի տաղանդավոր թենիսիստ, Ժան Միշել Սեյվը բերեւս [illegible] խաղաձեւ է կիրառում: Նա գլխավորում է համաշխարհային դասակարգման ցուցակը: Սեյվը [illegible] առաջնության եզրափակչում պարտություն էր կրել Յան Օվե Վալդներին (Շվեդիա): [illegible] հարվածներով եւ կայծակնային «բլոկ» հարվածներով համարյա թե կատարյալ, 1992-ի օլիմպիական չեմպիոն Վալդներն առայժմ երկրագնդի երկրորդ «ռակետն» է, սակայն հույս ունի բարձրանալ պատվանդանի բարձրագույն աստիճանին:

Չինական սեղանի թենիսը, որը 60-70-ականներին անպարտելի էր համարվում թիմային մրցումներում, հիմա ունի Վանգ Տաոյի (աշխարհում 3-րդ) եւ Մա Վենգի (4-րդ) նման հանրահայտ մարզիկներ: Թիենցինի պատերն արդյոք կօգնեն չինացիներին, որոնք աշխարհի չեմպիոն չեն ունեցել 1989-ի Չիանկ Չէ Լիանգի հաղթանակներից հետո:

Աշխարհի գավաթակիր Զորան Պրիմորակը, որն այժմ խաղում է Խորվաթիայի դրոշի ներքո, միշտ էլ համարվել է ոսկե մեդալների գլխավոր հավակնորդներից մեկը: Կորեական սեղանի թենիսի դպրոցի ներկայացուցիչները (հյուսիսային եւ հարավային) ցուցադրում են [illegible]

տանից, Պատրիկ Շիլան (Ֆրանսիա), Թիերի Գարբերան (Բելգիա) եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների բազմակի մրցանակակիրներ են: Այնպես որ, տղամարդկանց պայքարը սեղանի թենիսի բարձրագույն պարգեւի համար լինելու է չափազանց թեժ, ծնունդ տալով մարզական տեխնիկայի կատարելագործված իրագործումների:

Կանանց սեղանի թենիսն առայժմ գտնվում է աշխարհի 43-րդ առաջնության հյուրընկալողների տիրապետության տակ: Միայն 1 մ. 50 սմ հասակ ունեցող Տենգ Յա Փինգը Չինաստանի համար շահել է 8 ոսկի մեդալ` օլիմպիական եւ համաշխարհային մրցաշարերում: Խիաո Հոնգը, Կաո Յունը, Լիու Վեյը, Թանկ Վեյին առայժմ անպարտելի են ինչպես խմբային, այնպես էլ անհատական մրցումներում: Չինացի մարզուհիներին լուրջ վտանգ են սպառնում Հոնկոնգցի Չայ Վու Վայը (5-րդը աշխարհում), Լի Բուն Վուիյը (9-րդը), որ ներկայացնում է դեմոկրատական Կորեայի հզոր դպրոցը:

Եվրոպայի սեղանի թենիսուհիներն առայժմ զիջում են ծայրագույն արեւելքի ահեղ մրցակցուհիներին, սակայն շնորհիվ Ցիլա Բատորֆիի (Հունգարիա), Օտիլիա Բադեսկուի (Ռումինիա), Նիկոլ Ստրուզեի, հոլանդուհի Բետինա Վրիսկոոփի, ռուս «իտալուհի» Ֆլուրա Բուլատովայի, բուլղարուհի Դանիելա Կելկենչեւայի` եվրոպացի կանայք կարող են հասնել մի շարք նվաճումների:

Հայաստանի սեղանի թենիսի հավաքականը մասնակցելու է այս համաշխարհային ստուգատեսին` եթե անհրաժեշտ դրամական միջոցներ տրամադրվեն: Առանձնապես փայլուն մարզավիճակում է Արմինե Մակինյանը, որը խաղում է Իտալիայում: Աննա Պողոսյանը հանդես է գալիս Ֆրանսիայում: Նա հիմա մարզվում է Հայաստանի հավաքականի անդամների հետ: [illegible]

Բաժինը վարում է
ՍԱՄՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ՌԵՊԼԻԿ

«Ես տվել եմ մեր փողերը»

Ավանդատուների շարժումը, որպես հայոց նորագույն պատմության մի նոր էջ, երեւան է եկել շուրջ կես տարի առաջ «Արմենիա» բաժնետիրական ժողովրդական բանկի գործունեության արգելումից հետո: Ավելի քան 3 տասնյակ բանկային եւ այլ ֆինանսավարկային հիմնարկությունների աշխատանքների առկախման հետեւանքով, հանրապետությունում առաջացել է տուժած ավանդատուների ավելի քան 80 հազարանոց բանակ, որը ետ է պահանջում ներդրված գումարները: Շարժման կես տարվա ընթացքին հայտնի են բողոքի առավել ծայրահեղ դրսեւորումներ, երբ օրինակ Բաղրամյան պողոտայում փակվում էր երթեւեկությունը, կամ ՀՀ կենտրոնական բանկի առջեւ բռնկվում էին ծեծկռտուքներ: Այնուամենայնիվ ՀՀ պետական հեռուստատեսությունը երկար ժամանակ ինչ ինչ պատճառներով չէր նկատում նշված շարժման ամեն տեսակի վայրիվերումները: Նման պարագայում, ինչո՞վ է բացատրվում այն հետաքրքրությունը, որը վերջերս ցուցաբերվել է հեռուստատեսության կողմից ավանդատուների հարցը լուսաբանելու առիթով:

Ինչպես հայտնի է, մինչ օրս ոչ մի պետական կառույց իր վրա չի վերցրել այն պարտականությունները, որոնք կարող էին նպաստել ավանդատուների հարցի լուծմանը: Այժմ արդեն հասկանալի է, որ տվյալ հարցը հնարավոր է լուծել միայն ԳԽ-ում՝ օրենսդրական եղանակով այն քննարկման դնելով՝ եւ ակնհայտ է, որ մոտակա ժամանակներում այդ քննարկումը կլինի: Բանն այն է, որ ընտրությունների նախաշեմին իշխանությունների համար այլեւս անհնարին է դառնում սոցիալական գործոնի անտեսումը: Քաջ գիտակցելով դա, ՀՀ պետական հեռուստատեսությունը անհրաժեշտ գտավ անդրադառնալ տվյալ հարցին: Կարեւոր չէ, որ անդրադարձը չկայացավ: Առաջին քայլը արված է: Այժմ արդեն ավանդատուների խնդիրն է լինել ճկուն եւ զգոն: Շատ ավանդատուների խոսքերով՝ «մեզ չեն հետաքրքրում ընտրությունները, մենք ուզում ենք մեր փողերը եւ վերջ»: Ահա այսպես են սպանում պետական մտածողությունը, եւ այդ խարխուլ հիմքի վրա է, որ մեր կառավարությունը փորձում է կառուցել ժողովրդավարական պետություն:

ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մոսկվան Արեւմուտքին առաջարկում է վարել համատեղ քաղաքականություն

ԱՏԼԱՆՏԱ, 3 ՄԱՅԻՍ, ՌԻԱ-ՄՆԱՐՔ: Որ Եվրոպայում ֆաշիզմի նկատմամբ հաղթանակի 50-ամյակի տոնակատարության հանդիսությունների կենտրոնը Մոսկվան է, համապատասխանում է պատմական ճշմարտությանը. մեր երկիրը վճռական դեր է խաղացել այդ պատերազմում, հայտարարեց Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւն այստեղ իր երեկվա ելույթում: Մոսկվայում կհավաքվեն տասնյակ պետությունների ղեկավարներ:

Ռուսաստանին ոչինչ չի դատապարտում Արեւմուտքի կամ Արեւելքի հետ առճակատման: Ռուսաստանի քաղաքականության հիմնարար սկզբունքը երկրի շահերի պաշտպանությունն է, ոչ թե դիմակայության, այլ գործակցության միջոցով, շարունակեց նախարարը:

Այսօր ավելի հաճախ բախվում ենք ոչ թե միջպետական, այլ ներպետական խնդիրների: Ռուսական եւ ամերիկյան հրթիռներն այլեւս ուղղված չեն իրար դեմ, բայց ահաբեկչությունը, ագրեսիվ ազգայնականությունը, հանցախմբերն ու թմրամաֆիան ուղղված են ամենքիս դեմ, նշեց նա:

Անվտանգության խնդիրների լուծման համար այլեւս պիտանի չեն հին մոտեցումներն ու դաշինքները, գտնում է Կոզիրեւը: Մոսկվան առաջարկում է Եվրոպայի խնդիրները լուծել ոչ թե ՆԱՏՕ-ի ընդլայնման, այլ աշխարհամասում անվտանգության նոր մոդելի ստեղծման միջոցով:

Ռուսաստանը համաշխարհային ընկերակցությանը նաեւ կոչ է անում նախկին ԽՍՀՄ տարածքում միանալ հաշտարար ջանքերին եւ չլռել, «երբ խախտվում են ռուսալեզու բնակչության իրավունքները», նշեց նախարարը:

Իգդիր. Հայերն են թուրքերին կոտորել եւ այսօր էլ գործակցում են PKK-ի հետ

Ինչպես արդեն հաղորդվել էր, թուրքական Իգդիր քաղաքի իշխանությունների նախաձեռնությամբ հրավիրվել էր գիտաժողով՝ «Պատմական ճշմարտությունները եւ հայերը» թեմայով: «Թյուրքիյե» թերթը գրում է, որ բազմաթիվ թուրք եւ օտարազգի գիտնականների մասնակցությամբ կայացած գիտաժողովի բացումը կատարել է Իգդիրի կուսակալ Շամսեդդին Ուզունը եւ հայտարարել, որ «հայկական հարցի պարզումը ու պատմական ճշմարտությունների բացահայտումը ներկայումս անհետաձգելի անհրաժեշտություն են ներկայացնում. մենք գիտաժողովի համար ընտրել ենք ապրիլի 24-ը, որովհետեւ նրանք, որոնք այդ օրը ցեղասպանություն են արել՝ հայտարարում են, որ իրենց են սպանել», իսկ Իգդիրի քաղաքապետ Ալի Ասկյար Աշըրըն «հիշեցրել է, որ հայերն այդ շրջանում ապրող բոլոր մահմեդականներին թիրախ են սարքել եւ սպանել՝ առանց թուրքի եւ քրդի միջեւ խտրականություն դնելու: Հայերն այսօր համագործակցում են PKK-ի հետ Թուրքիան պառակտելու նպատակով»: Մի շարք թուրք «գիտնականներ» մոտավորապես կրկնել են վերոշարադրյալը, իսկ Ստամբուլում Ադրբեջանի գլխավոր հյուպատոս Արաս Հաջալօղլուն ասել է, որ ինչպես «այդ տարիներին» թուրքերի նկատմամբ, այնպես էլ այս տարիներին ադրբեջանցիների նկատմամբ հայերն իրագործում են ցեղասպանություն եւ «նրանց գլխավոր աջակիցը ռուսն է»:

Գիտնականները միմյանց միասնականության կոչ են արել, քանի որ «արեւմտյան տերությունները առիթը չեն կորցնում քրիստոնյաներին օգնելու եւ մահմեդականներին ճնշելու համար»: «Գիտաժողովը» շարունակվել է երեք օր:

Ա. ԱՍԻՐԽԱՆՅԱՆ, ՆՏ

ՇՐՋԱՆ

Միայն Ալլահը կօգնի Ադրբեջանին վերադարձնելու Ղարաբաղը

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Ոչ Արեւմուտքը եւ ոչ էլ Ռուսաստանը չեն օգնի Ադրբեջանին վերադարձնելու Ղարաբաղը. այսպիսի եզրակացության է հանգել «Եւրասիա» ադրբեջանա-թուրքական համատեղ շաբաթաթերթը, հայտնեցին Սնարք գործակալությանը Երեւանի հայկական անկախ մամլո կենտրոնում: Այն բոլոր հույսերը, թե Բաքվի նավթը կօգնի Ադրբեջանի օգտին լուծելու հակամարտությունը, պատրանք դարձան, ասվում է հոդվածում: Ապրիլի վերջերին Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Ռիչարդ Կոզլարիչը՝ ելույթ ունենալով Բաքվի համալսարանում, հայտարարել է. «Ոչ ԱՄՆ-ն եւ ոչ էլ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի մյուս երկրները չեն կարող վերջ դնել ղարաբաղյան պատերազմին: Այն չի կարող ավարտվել նաեւ ինքնըստինքյան: Միայն իրենք պատերազմող երկրներն ի վիճակի են վերացնելու խոչընդոտները պատերազմի ավարտի ճանապարհին»: Մեկնաբանելով դեսպանի խոսքերը, «Եւրասիան» հետեւություն է անում, թե ԱՄՆ-ն է դրդում Ադրբեջանին զիջումներ անելու հայերին ու նրանց թիկունքին կանգնած Ռուսաստանին: Նման զիջումները հանգեցնելու են ոչ միայն Ղարաբաղի, այլեւ ամբողջ Ադրբեջանի կորստյան: «Այս պայմաններում Ադրբեջանի ռազմավարական միակ դաշնակիցը Ալլահն է: Միմիայն Ալլահը կօգնի վերադարձնել Ղարաբաղը», այսպես է ավարտվում այդ քաղաքական վերլուծությունը:

Ռուսաստանը եւ Տաջիկստանը կարող են ունենալ մեկ ընդհանուր բյուջե

ԴՈՒՇԱՆԲԵ, 3 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Տաջիկստանի վարչապետ Ջամշեդ Քարիմովը, պատասխանելով «Բիզնես եւ քաղաքականություն» թերթի թղթակցի՝ Ռուսաստանի եւ Տաջիկստանի դրամական համակարգերի հավանական միավորման հետ կապված հարցին, ասել է. «Երկու երկրների դրամական համակարգերի միավորման դեպքում Ռուսաստանի եւ Տաջիկստանի բյուջեները մի ամբողջություն կկազմեն»: Խոսքը տնտեսական, այլ ոչ թե քաղաքական սերտաճման մասին է, պարզաբանում է վարչապետը: Տաջիկստանը պահպանելու է ինքնիշխան հանրապետության իր կարգավիճակը, իր սահմանադրությունը, խորհրդարանը, սակայն բյուջետային քաղաքականությունը կորոշվի միասնաբար:

«Մերսեդես-Բենցի» չինական նմուշներ

Վերջերս Չինաստանում տեղի ունեցած ավտոմոբիլային ֆիրմաների ցուցահանդեսում, որտեղ ներկայացված էին աշխարհի 20 ավտոմոբիլային հանրահայտ ֆիրմաների 100-ից ավելի նմուշներ, լավագույնը ճանաչվեցին գերմանական «Մերսեդես Բենց» ֆիրմայի մշակած մարդատար ավտոմոբիլների 4 նոր նմուշները: FCC (Family car china) կոչվող այս ընտանեկան ավտոմոբիլների սխեմաները ֆիրմայի կողմից հատուկ մշակվել են Չինաստանում արտադրելու եւ իրացնելու համար: Ավտոմոբիլները ծախսում են նվազագույն քանակությամբ վառելանյութ, ունեն լիմուզինային մոդելի տիպի մեծ՝ յոթ եւ հինգ տեղանոց ուղեւորատարներ, գյուղական ընտանիքների համար նախատեսված նմուշները կրում են նաեւ փոքրիկ թափքեր: FCC-ի արժեքը կազմում է մոտ 10 հազար ԱՄՆ դոլար: Ինչպես նշում է գերմանական մամուլը, «Մերսեդես»-ին վաղուց էր հետաքրքրում 12 մլրդ. բնակչություն ունեցող Չինաստանի ավտոմոբիլային շուկան: Անցյալ տարի միայն ֆիրմայի չինական բաժանմունքը թողարկեց 3700 մարդատար եւ 400 բեռնատար մեքենաներ: Նախատեսված է, որ Չինաստանում տարեկան կարտադրվեն նոր նմուշի մոտ 250 հազար «Մերսեդեսներ»:

ՆՏ



ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Իրանի արտադրության տանիքի ծածկույթ (ռուբերոիդ, տոլ): 1 քմ արժեքը 1275 դրամ: Քանակն անսահմանափակ, վճարումը կանխիկ կամ փոխանցումով: Զանգահարել 52-67-33, 52-76-63:

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ

«Դիագնոստիկա» բաժնետիրական ընկերության գլխավոր բժշկական կենտրոնը հայտնում է, որ իր նոր սարքային հնարավորությունները թույլ են տալիս հիվանդների համալիր հետազոտումը եւ ախտորոշումը գործնականում բոլոր հիմնական հիվանդությունների գծով ապահովել 1-2 օրվա ընթացքում: Այդ նպատակին է ծառայում միջազգային ստանդարտներին մոտ կանգնած մեր [illegible] եւ կադրային ներուժը: Նորակառույց շենքի հասցեն է. Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 64, հեռ. 34-45-85, 35-11-01: Աշխատանքի ժ. 9.00-16.00, բացի կիրակի օրերից:

VICTORIA concern

«Վիկտորիա» կոնցեռնը վաճառում է 12 էջանոց Մոսկվայի արտադրության, բարձր որակի աշակերտական տետրեր: Մեկ տետրի արժեքը 36 դրամ:

Զանգահարել՝ 58-39-96, 52-49-68

RASPUTIN
ԽՄԵՔ
ԲՅՈՒՐԵՂԻ
ՊԵՍ
ՄԱՔՈՒՐ
ՕՂԻՆ՝
ՄՈԳԱԿԱՆ
ԴԻՄԱՆԿԱՐՈՎ

ԱՐՄԻՆԴ
կենտրոնը
հրավիրում է
ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹԻ
ԵՐԵՎԱՆ - ՍԻՆԳԱՊՈՒՐ - ԵՐԵՎԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ»
ավիաընկերության ИЛ-86 ինքնաթիռով

7-ՕՐՅԱ ԴՐԱԽՏ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ
- ՑԱԾՐ ԳՆԵՐ
- ԲԱՐՁՐՈՐԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐ
- ԱՐՔԱՅԱՎԱՅԵԼ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ROYAL ՀՅՈՒՐԱՆՈՑ)
- ԲԵՌՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ
- ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ «ԱՐՄԻՆԴ»-Ի ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ
Մենք կարող ենք ՍԻՆԳԱՊՈՒՐ եւ ՀՆԴԿԱՍՏԱՆ տեղափոխել մինչեւ 20 տ բեռ ամենացածր գներով
Կքննարկենք ցանկացած կոմերցիոն առաջարկ կապված ՍԻՆԳԱՊՈՒՐԻ եւ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ հետ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 30-Ը
ԹՌԻՉՔԸ ԿԿԱՅԱՆԱ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ՈՂՋ ՕՐԸ
ՈՒՂԵԳՐԻ ԱՐԺԵՔԸ 1250$:

«Էրեբունի» հյուրանոց, I մասնաշենք, 301-307 ս.
Հեռ. 52-75-65, 56-13-92, 56-05-79

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1834 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության 3.05.1995 Գինը 40 դրամ